Երկրորդ ընթերցում

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-647-10.08.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմունքները, գործունեություն իրականացնող անձանց ներկայացվող պահանջների, ֆիզիկական անձանց հանգստի, շրջագայության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Զբոսաշրջային գործունեության իրավական կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Օրենքի հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **այցելու՝** ֆիզիկական անձ, որը ցանկացած նպատակով (գործնական, հանգստի կամ անձնական այլ նպատակներով) ճանապարհորդում է իր հիմնական կացության վայրից այլ վայր մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ժամանման վայրում ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ

կազմակերպության կողմից վճարվող աշխատանքի կամ ծառայության մեջ ներգրավվելու դեպքերի:

Սահմանային, սեզոնային կամ այլ կարճաժամկետ աշխատանքի, ցանկացած բնագավառում հեռավար (թվային) աշխատանքի, դիվանագիտական, հյուպատոսական, զինվորական աշխատանքի, երկարաժամկետ (մեկ տարի և ավել) կրթություն ստանալու, երկարաժամկետ (մեկ տարի և ավել) բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակներով ճանապարհորդող ֆիզիկական անձինք այցելու չեն համարվում.

2) **զբոսաշրջիկ**՝ այցելու, որը ժամանման վայրում անցկացնում է առնվազն մեկ գիշերակաց, սակայն ճանապարհորդությունը տևում է մինչև 1 տարի.
3) **մեկօրյա այցելու**՝ այցելու, որը ժամանման վայրում չի անցկացնում առնվազն մեկ գիշերակաց.
4) **զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորում**՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ստեղծված ոչ առևտրային կազմակերպություն, որը միավորում է մեկ կամ մի քանի տեսակի զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց կամ ներկայացնում է այդ անձանց շահերը և սույն օրենքով սահմանված կարգով ընտրվելու դեպքում որակավորում է զբոսաշրջային ծառայությունները կամ հյուրանոցային տնտեսության օբյեկտները.
5) **զբոսաշրջություն**՝ ճանաչողական, հանգստի, հարազատներին այցելության, առողջարարական, վերականգնողական, գործնական, կրթական, կրոնական, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, համաժողովների, տոնակատարությունների, ցուցահանդեսների, մշակութային, բնապահպանական, գործառնական նշանակության և այլ բնույթի միջոցառումներին մասնակցելու և այլ նպատակներով մինչև 1 տարի ժամկետով ճանապարհորդություն հիմնական կացության վայրից այլ վայր.
6) **Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ**՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով ռեզիդենտ համարվող ֆիզիկական անձ.
7) **Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ**՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իմաստով ոչ ռեզիդենտ համարվող ֆիզիկական անձ.

8) **ներգնա զբոսաշրջություն**՝ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տարածքում.
9) **արտագնա զբոսաշրջություն**՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս.
10) **ներքին զբոսաշրջություն**՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տարածքում.
11) **զբոսաշրջային ծառայություններն** են.
   ա. ուղևորափոխադրման,
   բ. հյուրանոցային,
   գ. էքսկուրսային,
   դ. ավտոտրանսպորտային միջոցի վարձույթի,
   ե. զբոսաշրջիկին մատուցվող կամ առաջարկվող որևէ այլ ծառայություն, որը սույն կետի ա.-դ. պարբերություններում թվարկված ծառայությունների անբաժանելի մաս չի կազմում.
12) **զբոսաշրջային փաթեթ**՝ միևնույն այցելության ընթացքում առնվազն երկու տարբեր տեսակի զբոսաշրջային ծառայությունների համալիր, եթե զբոսաշրջային ծառայությունները համակցվում են (ներառյալ՝ զբոսաշրջիկի ընտրությամբ) զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտի կողմից նախքան զբոսաշրջային փաթեթի մեկ միասնական պայմանագիր կնքելը, կամ առանձնացված պայմանագրեր կնքելու դեպքում՝ այդ զբոսաշրջային ծառայությունները՝
   ա. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտից և համակցվում են մինչև գործարքի վճարման համար համաձայնություն տալը, կամ
   բ. առաջարկվում, իրացվում կամ դրանց դիմաց վճարումը կատարվում է պայմանագրի ամբողջական գնով, իսկ առանձնացված պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերի հանրագումարով (ներառական գին), կամ
   գ. գովազդվում կամ իրացվում են «զբոսաշրջային փաթեթ» կամ նմանատիպ այլ եզրույթի կիրառմամբ, կամ
   դ. զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելուց հետո համակցվում են զբոսաշրջիկի ընտրությամբ, կամ
   ե. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության տարբեր սուբյեկտներից միմյանց հետ կապված առցանց ամրագրման ընթացակարգերով, երբ

զբոսաշրջիկի հետ առաջին պայմանագիրը կնքած անձի կողմից զբոսաշրջիկի անձնական տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն և վճարման պայմանները փոխանցվում են ծառայություններ մատուցող երրորդ անձանց, իսկ ծառայություններ մատուցող երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվում են առաջին զբոսաշրջային ծառայության ամրագրման հաստատումից հետո 24 ժամվա ընթացքում.

13) **զբոսաշրջային փաթեթի պայմանագիր**՝ մեկ միասնական կամ առանձնացված պայմանագրեր, որոնք ներառում են միևնույն այցելության ընթացքում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների պայմանները.
14) **զբոսաշրջային փաթեթի մեկնարկ**՝ զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների մատուցումը սկսելու ամսաթիվ.
15) **տուր**՝ առնվազն երկու տարբեր զբոսաշրջային ծառայությունների համալիր, որն առաջարկվում կամ իրացվում է մեկ ընդհանուր գնով, սակայն չի պարունակում գիշերակաց և իրականացվում է մինչև 24 ժամվա ընթացքում.
16) **զբոսաշրջային ռեսուրսներ**՝ զբոսաշրջիկների մտավոր, նյութական, ֆիզիկական և այլ պահանջմունքների բավարարմանն ուղղված պատմամշակութային, կրոնական, բնական, մարդկային, առողջարարական, սոցիալ-տնտեսական, ենթակառուցվածքային և այլ ռեսուրսներ, որոնք կարող են հանդիսանալ զբոսաշրջային արդյունք կամ գրավչության օբյեկտ կամ ներառվել զբոսաշրջային փաթեթում.
17) **զբոսաշրջային արդյունք (պրոդուկտ)**՝ մեկ կամ մի քանի զբոսաշրջային ռեսուրս կամ ծառայություն, որոնք առաջարկվում են զբոսաշրջիկին.
18) **զբոսաշրջային գործունեության սուբյեկտ**՝ զբոսաշրջային օպերատոր կամ զբոսաշրջային գործակալ.
19) **զբոսաշրջային օպերատոր**՝ իրավաբանական անձ, որը ձևավորում և անմիջականորեն կամ զբոսաշրջային գործունեության այլ սուբյեկտի միջոցով կամ, զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի հետ համատեղ հանդես գալով, իրացնում է կամ առաջարկում է զբոսաշրջային փաթեթ, տուր կամ այլ առանձին զբոսաշրջային ծառայություններ կամ փոխանցում է զբոսաշրջիկի տվյալները զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի՝ համաձայն սույն հոդվածի 12-րդ կետի ե. պարբերության.
20) **զբոսաշրջային գործակալ**՝ զբոսաշրջային օպերատոր չհանդիսացող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն անհատ զբոսաշրջիկին կամ զբոսաշրջիկների խմբին տրամադրում է զբոսաշրջության հետ կապված խորհրդատվություն կամ առաջարկում կամ վաճառում է

զբոսաշրջային օպերատորի կողմից ձևավորված զբոսաշրջային փաթեթ կամ առանձին զբոսաշրջային ծառայություններ.

21) **ներգնա զբոսաշրջային գործակալ**՝ ներգնա զբոսաշրջություն կազմակերպող զբոսաշրջային գործակալ.

22) **ներքին զբոսաշրջային գործակալ**՝ ներքին զբոսաշրջություն կազմակերպող զբոսաշրջային գործակալ.

23) **արտագնա զբոսաշրջային գործակալ**՝ արտագնա զբոսաշրջություն կազմակերպող զբոսաշրջային գործակալ.

24) **զբոսավար**՝ սույն օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ստացած անձ, որը զբոսաշրջիկներին տրամադրում է տեղեկություններ հնագիտության, պատմության, նվաճումների, բնության, աշխարհագրության, պետության կառուցվածքի, զբոսաշրջային արդյունքի, հայ ժողովրդի և ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի, կենցաղավարության մասին և զբոսաշրջային երթուղու շրջանակներում մատուցում է զբոսաշրջիկներին դիմավորման, տեղաբաշխման, տեղավորման, սննդի կազմակերպման և այլ ծառայություններ.

25) **ուղեկցորդ**՝ սույն օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող անձ, որը զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից տրամադրված երթուղու շրջանակներում ուղեկցում է զբոսաշրջիկներին, ապահովում է ժամանակին և պատշաճ որակով ծառայությունների մատուցումը և/կամ ֆիզիկական վնասվածքի ռիսկ պարունակող երթուղիների ընթացքում, տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված, իրականացնում է անվտանգության կանոնների հրահանգավորման և աջակցման գործառույթներ.

26) **զբոսաշրջային ավտոբուս**՝ առնվազն 9 նստատեղ (բացառությամբ վարորդի նստատեղի) և զբոսաշրջային ավտոբուսի որակավորում ունեցող ավտոտրանսպորտային միջոց, որով իրականացվում է զբոսաշրջիկների ոչ կանոնավոր փոխադրում.

27) **զբոսաշրջային երթուղի**՝ զբոսաշրջային գրավչության օբյեկտներ և վայրեր միավորող երթուղի.

28) **զբոսաշրջային ուղևորափոխադրող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը զբոսաշրջային ավտոբուսներով իրականացնում է ոչ կանոնավոր զբոսաշրջային ուղևորափոխադրումներ.

29) **զբոսաշրջային կենտրոն**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված նշանակալի զբոսաշրջային ռեսուրս պարունակող

բնակավայր, վարչական շրջան կամ վարչատարածքային միավոր, ինչպես նաև դրանց համախումբ.

30) **զբոսաշրջային կենտրոնի կառավարման պլան՝** միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում զբոսաշրջային կենտրոնի կայուն զարգացման և կառավարման ծրագիր, որը կարող է բաղկացած լինել զբոսաշրջային կենտրոնում ներառված առանձին բնակավայրերի, վարչական շրջանների կամ վարչատարածքային միավորների զարգացման ծրագրերից.

31) **զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություն՝** իրավաբանական անձ, որի գործառույթները սահմանվում են այդ կազմակերպության կանոնադրությամբ և կարող են ընդգրկել զբոսաշրջային ռեսուրսների թողունակության գնահատումը, զբոսաշրջային կենտրոնի ճանաչելիության բարձրացումը, դեպի այդ կենտրոն զբոսաշրջիկների հոսքերի ուղղորդումը և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ զբոսաշրջային կենտրոնների կայուն զարգացումը.

32) **զբոսաշրջային փորձառություն՝** մշակութային, ձեռագործ աշխատանքի, խոհարարության կամ արվեստի կամ արհեստի կամ այլ հատուկ գիտելիքներ կամ հմտություններ պահանջող անձի առաջնորդությամբ կամ ցուցումներով զբոսաշրջիկի ներգրավմամբ անցկացվող գործնական կամ տեսական պարապմունքների կամ դասընթացների կազմակերպում կամ անցկացում այդ գիտելիքների ցուցադրման կամ փոխանցման համար հատուկ հարմարեցված վայրերում, որով զբոսաշրջիկը կարող է ձեռք բերել այդ բնագավառի գիտելիքներ կամ հմտություններ՝ միաժամանակ ծանոթանալով հայկական կամ ազգային փոքրամասնությունների մշակույթին և ավանդույթներին.

33) **զբոսաշրջային գյուղ՝** Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված նշանակալի զբոսաշրջային ռեսուրսներ պարունակող գյուղական բնակավայր.

34) **հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝** սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված օբյեկտ.

35) **հյուրանոցային ծառայություն մատուցող անձ՝** իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ, որը սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ կառավարման իրավունքով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքով տիրապետում կամ կառավարում և շահագործում է հյուրանոցային տնտեսության օբյեկտ.

36) **հյուրանոցային համար**՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտում զբոսաշրջիկի կացության (գիշերակացի) համար կահավորված առանձնացված գույքային միավոր.

37) **սպառող**՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցումից օգտվող ֆիզիկական անձ.

38) **զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն՝** իրավաբանական անձ, որը սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու.

39) **զբոսաշրջային գործունեություն՝** իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից զբոսաշրջային ծառայություններ մատուցելու գործունեություն:

ԳԼՈՒԽ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝
   1) հաստատում է զբոսաշրջության բնագավառում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին օժանդակության ծրագրեր.
   2) ընդունում է զբոսաշրջային կենտրոններ, զբոսաշրջային գյուղեր հայտարարելու վերաբերյալ որոշումներ, տեղական ինքնակառավարման մարմինների հաստատած ծրագրերի դրույթների հաշվի առնմամբ հաստատում է դրանց կառավարման պլանը.
   3) սահմանում է անձի կյանքի կամ առողջության համար վտանգ պարունակող զբոսաշրջային ծառայությունների մատուցման որակական և տեխնիկական չափորոշիչները.
   4) հաստատում է զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը.

5) իրականացնում է սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 5. Զբոսաշրջության բնագավառում պետական լիազոր մարմնի լիազորությունները

1. Զբոսաշրջության բնագավառում պետական լիազոր մարմինը՝
   1) հաստատում է զբոսաշրջության զարգացմանն ուղղված տարեկան ծրագրերը, ծրագրերի իրականացման միջոցառումների ժամանակացույցները և ծրագրերի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվները.
   2) հաստատում է զբոսաշրջային կենտրոններ կամ զբոսաշրջային գյուղեր հայտարարելու համար պահանջվող նվազագույն չափանիշները, այդ թվում՝ քաղաքաշինական և բնապահպանական հատուկ նորմեր, զարգացման նպատակներ, խնդիրներ, միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում՝ աշխարհագրական առանձին տարածքների համար սահմանելով այդ տարածքների առանձնահատկություններից բխող նորմեր.
   3) հաստատում է զբոսաշրջային երթուղիներ.
   4) հաստատում է զբոսաշրջային փորձառությունների որակավորման չափանիշները, ընթացակարգերը, որակավորման վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը, որակավորման վկայականների ու տարբերանշանների ձևերը.
   5) հաստատում է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկվող զբոսաշրջային օպերատորների հաշվառման, սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության հաշվետվական էլեկտրոնային համակարգում ընդգրկման և հաշվառված զբոսաշրջային օպերատորներին հաշվառումից հանելու կարգը.
   6) իրականացնում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 6. Զբոսաշրջության կոմիտեի լիազորությունները

1. Զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հանդիսանում է զբոսաշրջության բնագավառում սույն օրենքով սահմանված լիազորություններ կրող իրավասու պետական մարմին:
2. Կոմիտեն՝

1) մշակում և պետական լիազոր մարմնի ղեկավարին է ներկայացնում սույն օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական լիազոր մարմնի կողմից հաստատման (սահմանման) ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի հետ.
2) մշակում է զբոսաշրջության բնագավառի ռազմավարությունը, զարգացման տարեկան ծրագրերը, ծրագրերի իրականացման միջոցառումների ժամանակացույցները և ծրագրերի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվները, ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը.
3) տեղական ինքնակառավարման մարմինների քննարկմանն է ներկայացնում զբոսաշրջային կենտրոնի կամ զբոսաշրջային գյուղի կարգավիճակի հայտարարման համար անհրաժեշտ առաջարկներ.
4) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնում է զբոսաշրջության զարգացման վերաբերյալ առաջարկություններ.
5) վարում է զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանը.
6) վարում է զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանը.
7) միջազգային համագործակցության շրջանակներում մշակում և իրավասու պետական կառավարման մարմնի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ զբոսաշրջության բնագավառում միջգերատեսչական պայմանագրերի վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրյա գործընկերների հետ հարաբերություններում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը.
8) կազմակերպում է զբոսաշրջությանն ուղղված տեղեկատվական, գովազդային և հրատարակչական գործունեություն.
9) մշակում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ գովազդի բովանդակությունը և պատասխանատու է իր կողմից կազմված կամ պատվիրված գովազդներում, թերթոններում, հրապարակումներում տեղ գտած տեղեկատվության բովանդակության ճշգրտության, դրանցում վիրավորանք, զրպարտություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կամ կնքված պայմանագրերի դրույթները խախտող տեղեկատվություն ներառելու համար.
10) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարցումների հիման վրա տրամադրում

է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ տեղեկատվություն.

11) զբոսաշրջության բնագավառում ծառայությունների որակի բարձրացման նպատակով իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց.
12) հաշմանդամություն ունեցող անձանց համար զբոսաշրջային ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց՝ համագործակցելով համապատասխան լիազոր մարմնի հետ.
13) իրականացնում է զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների և զբոսաշրջային փորձառությունների որակավորում.
14) ապահովում է որակավորված զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների և զբոսաշրջային փորձառությունների պարբերական գնահատման աշխատանքները.
15) իրականացնում է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակում զբոսաշրջային օպերատորների հաշվառման գործընթացը.
16) իրականացնում է մարքեթինգային (այդ թվում՝ արտաքին շուկաների) ուսումնասիրություններ, վերլուծություններ.
17) իրականացնում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության ու հայկական զբոսաշրջային արդյունքի (այդ թվում՝ նաև գովազդատեղեկատվական նյութերի) ներկայացումը՝ խթանելով այն միջազգային միջոցառումներին (այդ թվում՝ մասնագիտացված ցուցահանդեսներին) մասնակցության, մամուլի, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային մարքեթինգի և հասարակության հետ կապերի այլ միջոցներով.
18) ներկայացնում է առաջարկություններ պետական իրավասու կառավարման մարմնին զբոսաշրջային կենտրոններում, զբոսաշրջային գյուղերում և զբոսաշրջության համար կարևոր նշանակություն ունեցող այլ վայրերում տնտեսական և քաղաքաշինական գործունեության չափորոշիչների վերաբերյալ.
19) հաստատում է Կոմիտեի պաշտոնական կայքի վարման կարգը.

20)իրականացնում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 3. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ

Հոդված 7. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյան

1. Էլեկտրոնային գրանցամատյանի վարման նպատակն է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվության հավաքման, մշակման և տրամադրման միջոցով նպաստել՝
   1) սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությանը.
   2) Հայաստանի Հանրապետության կողմից զբոսաշրջության բնագավառում պետական արդյունավետ քաղաքականության մշակմանը:
2. Էլեկտրոնային գրանցամատյանում գրանցված զբոսաշրջային ծառայություններ մատուցողների տեղեկատվության բովանդակությունը, ներկայացման և վարման կարգն ու ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 8. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանը

1. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի վարման կարգը, տվյալների բազայի բովանդակությունը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:
2. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի վարման գործընթացում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են Կոմիտեին տրամադրել զբոսաշրջային ռեսուրսների մասին տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 4. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՆՔ, ԴՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հոդված 9. Զբոսաշրջության բնագավառում որակավորումը

1. Զբոսաշրջության բնագավառում որակավորումը պետական լիազոր մարմնի կամ սույն օրենքով սահմանված դեպքերում զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումների կողմից հյուրանոցային տնտեսության օբյեկտի, զբոսաշրջային ավտոբուսի, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի, զբոսավարի, ուղեկցորդի, զբոսաշրջային փորձառությունների՝ սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափորոշիչներին և պահանջներին համապատասխանության հաստատումն է:
2. Որակավորման արդյունքներով հյուրանոցային տնտեսության օբյեկտին տրամադրվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման կարգ, իսկ զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությանը, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնին, զբոսավարին, ուղեկցորդին, զբոսաշրջային ավտոբուսին և զբոսաշրջության փորձառություններին՝ որակավորում, կամ մերժվում է որակավորման կամ որակավորման կարգի տրամադրումը:
3. Որակավորում կամ որակավորման կարգ տրամադրելու դեպքում տրվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևի որակավորման վկայական:
4. Որակավորման կամ որակավորման կարգի տրամադրումը մերժվում է, եթե հյուրանոցային տնտեսության օբյեկտը, զբոսաշրջային ավտոբուսը, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունը, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, զբոսավարը, ուղեկցորդը կամ զբոսաշրջային փորձառությունը՝
   1) չի համապատասխանում սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափորոշիչներին և պահանջներին.
   2) «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցում իրականացնելու պարտականություն ունեցող անձը չի ծանուցել կամ գործունեությունը դադարել է, եթե առկա է ծանուցման պահանջ.
   3) որակավորման համար ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ:

5. Հյուրանոցային տնտեսության օբյեկտը, զբոսաշրջային ավտոբուսը, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունը, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, զբոսավարը, ուղեկցորդը, զբոսաշրջային փորձառությունները զրկվում են սույն օրենքով սահմանված կարգով տրված որակավորումից կամ որակավորման կարգից, եթե ի հայտ են եկել սույն հոդվածի 4-րդ մասի 1-2 կետերով սահմանված հիմքերը:

Հոդված 10. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց դասակարգումը

1. Զբոսաշրջային ծառայություն մատուցող անձինք են.

1) հյուրանոցային ծառայություն մատուցող անձը,

2) զբոսաշրջային օպերատորը,

3) զբոսաշրջային գործակալը,

4) զբոսավարը,

5) ուղեկցորդը,

6) զբոսաշրջային ավտոբուսով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող անձը,

7) սույն օրենքի 3-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված այլ ծառայություններ մատուցող անձինք:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործունեությունը ենթակա է ծանուցման «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 11. Հյուրանոցային ծառայությունները

1. Հյուրանոցային ծառայություններն են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման հետ կապված, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ծառայությունները:
2. Նվազագույն հյուրանոցային ծառայություններն են՝

   1) կացարանի և սանհանգույցի տրամադրումը,

   2) կացարանի ու սանհանգույցի մաքրումը և անկողնու հարդարումը:

Հոդված 12. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակների նվազագույն պահանջները

1. Հյուրանոցը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ և առկա է առնվազն 10 հյուրանոցային համար, որոնցից առնվազն 3-ը՝ մեկ կամ երկտեղանոց համարներով:
2. Ափարթհոթել (aparthotel)՝ հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար հարմարեցված, խոհանոցային հատված ունեցող և համապատասխան սարքավորումներով կահավորված, համեմատաբար երկար ժամկետով մնացող սպառողների համար նախատեսված շինություն, որը նախատեսված չէ սպառողների մշտական բնակության համար:
3. Մոթելը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որը գտնվում է միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարևանությամբ, բաղկացած է մեկ կամ մի քանի շինություններից կամ կազմում է որևէ շինության մաս, ունի առնվազն 6 հյուրանոցային համար (մեկ կամ երկտեղանոց) և որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ: Մոթելում, որպես կանոն, մատուցվում են նաև ավտոմեքենաների կայանման և տեխնիկական սպասարկման ծառայություններ:
4. Առողջարանը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ բացի նվազագույն հյուրանոցային ծառայություններից, մատուցվում են նաև հատուկ կարգի ծառայություններ (առողջարանային, բուժական, վերականգնողական)՝ օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում մատուցվում է նաև բժշկական օգնություն և սպասարկում:
5. Հոսթելը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ, բացի նվազագույն հյուրանոցային ծառայություններից, տրամադրվում են ինքնասպասարկման հնարավորություններ: Հոսթելն ունի գիշերելու համար առնվազն 10 ննջատեղ:
6. Մասնագիտացված ճամբարը կամ տունը շարժական կամ անշարժ հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ կամ որին հարակից տարածքներում մատուցվում են հյուրանոցային ծառայություններ որոշակի մասնագիտացված անձանց (մշակութային, հնագիտական, գյուղատնտեսական, բնապահպանական, մանկապատանեկան (դպրոցահասակ զբոսաշրջիկների համար), մարզական, որսորդական, ձկնորսական, լեռնամագլցման և այլն):
7. Հանգստյան տունը (պանսիոնը) հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ, որպես կանոն, այցելում են ժամանցի, արձակուրդի և հանգստի այլ ձևերի նպատակով և որտեղ բացի նվազագույն հյուրանոցային ծառայություններից,

օրական առնվազն 3 անգամ կազմակերպվում և մատուցվում են սննդի ծառայություններ:

8. Ճամբարային բնակատեղին (քեմփինգ) հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ գիշերակացի և սննդի կազմակերպման ծառայությունները մատուցվում են շարժական գույքի օգտագործմամբ կամ վրաններում:
9. Զբոսաշրջային տունը (B&B) ֆիզիկական անձի (հյուրընկալի) կողմից տիրապետվող և օգտագործվող ու բնակության համար նախատեսված տուն կամ բնակարան է, որը, ձևափոխվելով և հարմարեցվելով զբոսաշրջիկներ հյուրընկալելու համար, իր հարմարություններով մատուցում է նախաճաշի տրամադրմամբ զուգորդվող նվազագույն հյուրանոցային ծառայություններ: Որպես կանոն, հյուրընկալը բնակվում է այդ տանը, իսկ նախաճաշը պատրաստում է հյուրընկալը կամ նրա ընտանիքի անդամը:
10. Հյուրատունը հյուրանոցային ծառայություններ մատուցող բնակելի տուն կամ առանձին շինություն կամ շինությունների համակցություն է, որն ընդհանուր առմամբ ունի առավելագույնը 9 առանձնացված հյուրանոցային համար:

Հոդված 13. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը

1. Հյուրանոցային ծառայությունները մատուցվում են բացառապես հյուրանոցային տնտեսության օբյեկտներում:
2. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները կարող են որակավորվել: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը կամավոր է:
3. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումն իրականացնում է սույն հոդվածով սահմանված կարգով ընտրված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքի:
5. Հյուրանոցային տնտեսության օբյեկտներին որակավորում տրամադրող զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման ընտրության չափանիշները և կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման պահանջը համարվում է բավարարված, եթե վերջինս ունի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխանող միջազգային որակավորում:
7. Մրցույթով ընտրված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը ընտրվելուց հետո իր կանոնադրության փոփոխությունները համաձայնեցնում է Կոմիտեի հետ, եթե այդ փոփոխությունները կարող են հանգեցնել կամ ազդեցություն ունենալ որակավորման գործառույթի վրա:
8. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված միավորման կողմից ընտրության մրցույթը չկայանալու, մրցույթի արդյունքներն անվավեր ճանաչվելու կամ այլ հիմքով մրցույթի միջոցով ընտրություն կազմակերպելու անհնարինության դեպքում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը իրականացնում է Կոմիտեն՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

Հոդված 14. Հյուրանոցային ծառայություններին ներկայացվող պահանջները

1. Պետական լիազոր մարմնի ղեկավարը հաստատում է հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց ներքին կանոնակարգի նվազագույն պահանջները:
2. Նոր կառուցվող հյուրանոցներում և առողջարաններում պետք է ապահովված լինի հաշմանդամություն ունեցող անձանց համար հյուրանոցային ծառայություններից օգտվելու և ծառայությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու հնարավորություն, որի մասին տեղեկատվությունը տեղադրվում և մշտապես պահվում է հյուրերի համար տեսանելի հատվածներում:

Հոդված 15. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների նկատմամբ պահանջները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցման կանոններ և պահանջներ:
2. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտը ծանուցման հետ միասին պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կանոններին և պահանջներին իր համապատասխանության վերաբերյալ:
3. Զբոսաշրջային օպերատորը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված ծանուցման հետ միաժամանակ պարտավոր է

ներկայացնել սույն հոդվածով նախատեսված երաշխիք, եթե նախատեսում է մատուցել արտագնա զբոսաշրջության հետ կապված ծառայություններ:

4. Արտագնա զբոսաշրջային գործակալը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված ծանուցման հետ միաժամանակ պարտավոր է ներկայացնել երաշխիք, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:
5. Արտագնա զբոսաշրջային գործակալը չի ներկայացնում երաշխիք, եթե առաջարկում կամ վաճառում է բացառապես զբոսաշրջային օպերատորի կողմից ձևավորված զբոսաշրջային փաթեթներ կամ այդպիսի ծառայություններ է մատուցում զբոսաշրջային օպերատորի անունից:
6. Զբոսաշրջային օպերատորի և արտագնա զբոսաշրջային գործակալի կողմից երաշխիքի ձևը, նպատակը, չափերը, պարբերականությունը, ներկայացման կարգը, երաշխիքի տեքստի օրինակելի ձևը, երաշխիք տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը, երաշխիքով պահանջ ներկայացնելու, երաշխիքի գումարը բաշխելու և երաշխիքը դադարեցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7. Զբոսաշրջային օպերատորը և արտագնա զբոսաշրջային գործակալը կարող են ներկայացնել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և լիցենզավորված բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական ընկերությունների տրամադրած երաշխիքներ, եթե այդ երաշխիքները բավարարում են սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով երաշխիքների համար սահմանված պայմաններին:
8. Երաշխիքը հետկանչման ենթակա չէ: Երաշխիքով ապահովվում են սպառողների նկատմամբ զբոսաշրջային օպերատորի կամ արտագնա զբոսաշրջային գործակալի ստանձնած պարտավորությունները:
9. Երաշխիքով որպես պարտատեր (բենեֆիցիար) հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական լիազոր մարմնի: Երաշխիքով պահանջը երաշխիք թողարկած անձին Հայաստանի Հանրապետության անունից ներկայացնում է պետական լիազոր մարմինը:
10. Երաշխիքով պահանջ ներկայացվում է, եթե երաշխիքը ներկայացրած զբոսաշրջային օպերատորը կամ արտագնա զբոսաշրջային գործակալը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում կամ հրաժարվում է կատարել սպառողի հանդեպ ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում անհնար է դարձել զբոսաշրջիկի կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող անձի մեկնումը Հայաստանի Հանրապետությունից կամ վերադարձը Հայաստանի Հանրապետություն:

Հոդված 16. Զբոսաշրջային ավտոբուսների որակավորումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային երթուղիների կազմակերպման համար զբոսաշրջային օպերատորները, ներգնա և ներքին զբոսաշրջային գործակալները (այդ թվում՝ օտարերկրյա գրանցում ունեցող զբոսաշրջային օպերատորները և զբոսաշրջային գործակալները) պարտավոր են իրենց ծառայություններից օգտվողներին մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխել կամ զբոսաշրջային երթուղին կազմակերպել միայն զբոսաշրջային ավտոբուսների միջոցով, եթե այդ անձանց քանակը հավասար է կամ գերազանցում է 9-ը:
2. Զբոսաշրջային ավտոբուսները որակավորվում են: Զբոսաշրջային ավտոբուսների որակավորումը պարտադիր է:
3. Զբոսաշրջային ավտոբուսների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը, չափորոշիչները, որակավորման վկայականի ու նշանի ձևերը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ձևի նշանը փակցվում է զբոսաշրջային ավտոբուսի դիմապակու վրա՝ տեսանելի հատվածում:

Հոդված 17. Զբոսաշրջային ավտոբուսի կայանումը և կանգառը

1. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են համայնքի վարչական սահմաններում գտնվող զբոսաշրջային գրավչություններին հարակից տարածքներում առանձնացնել առնվազն երեք զբոսաշրջային ավտոբուսների համար կայանատեղի, եթե այդ տարածքները համարվում են պետական կամ համայնքային սեփականություն և բացակայում են նման որոշման կայացման համար օրենքով սահմանված արգելքները:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կայանատեղիները կազմակերպվում են զբոսաշրջային գրավչության օբյեկտի հարևանությամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով հանրության մուտքը և ելքը:

Հոդված 18.Զբոսավարների և ուղեկցորդների որակավորումը

1. Զբոսավարները և ուղեկցորդները որակավորվում են: Զբոսավարների և ուղեկցորդների որակավորումը պարտադիր է:
2. Զբոսավարների և ուղեկցորդների որակավորման պահանջները, որակավորման ընթացակարգը, վերապատրաստման ծրագիրը, կարգը, պարբերականությունը և ժամկետները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը, զբոսավարների ու ուղեկցորդների անվանաքարտերի ձևերը, մասնագիտացման ուղղությունները, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
3. Հայաստանի Հանրապետությունում զբոսավարների և ուղեկցորդների գործունեությունը ենթակա է ծանուցման «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով, բացառությամբ եթե աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով այդ անձինք կատարում են զբոսավարի կամ ուղեկցորդի գործառույթներ զբոսաշրջային գրավչության օբյեկտը շահագործող կամ կառավարող կազմակերպությունում:
4. Ծանուցված զբոսավարները և ուղեկցորդները պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով, պարբերականությամբ և ժամկետներում մասնակցել ուսուցման ազգային ռեեստրում գրանցված անձանց կողմից իրականացվող զբոսավարների, ուղեկցորդների մասնագիտական որակավորման և վերապատրաստման դասընթացներին:

Հոդված 19. Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորումը

1. Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունները որակավորվում են: Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների որակավորումը պարտադիր է:
2. Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները կարող են որակավորվել: Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորումը կամավոր է:
3. Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների որակավորման ընթացակարգը, չափորոշիչները (այդ թվում՝ զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության գործառույթներին, կառուցվածքին վերաբերող նվազագույն պահանջները), որակավորման վկայականի ձևը, որակավորման

վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Որակավորված զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին շնորհվում է տարբերանշան: Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորման ընթացակարգը և տարբերանշանի ձևը, չափորոշիչները, որակավորման վկայականի ձևը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 5. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված 20. Զբոսաշրջության ծառայությունների մատուցման արգելքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է մատուցել սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային ծառայություններ, եթե զբոսաշրջային ծառայություններ մատուցելու մտադրություն ունեցող անձը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով չի ծանուցել:
2. Զբոսավարը կարող է գործունեություն իրականացնել որպես՝
    1) անհատ ձեռնարկատեր, կամ
    2) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, եթե զբոսավարի ծառայություններ մատուցում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրի հիման վրա:
3. Զբոսավարը կարող է մատուցել միայն զբոսավարի ծառայություն, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:
4. Անհատ ձեռնարկատեր հանդես գալու դեպքում զբոսավարն այլ զբոսաշրջային ծառայություններ կարող է մատուցել, եթե բավարարում է զբոսաշրջային ծառայության տվյալ տեսակի համար սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցել է:
5. Ուղեկցորդը կարող է գործունեություն իրականացնել որպես՝
    1) անհատ ձեռնարկատեր, կամ

2) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, եթե ուղեկցորդի ծառայություններ մատուցում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրի հիման վրա:

6. Ուղեկցորդը կարող է մատուցել միայն ուղեկցորդի ծառայություն, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի:
7. Որպես անհատ ձեռնարկատեր հանդես գալու դեպքում ուղեկցորդն այլ զբոսաշրջային ծառայություններ կարող է մատուցել, եթե բավարարում է զբոսաշրջային ծառայության տվյալ տեսակի համար սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցել է:
8. Արգելվում է զբոսաշրջային ծառայություններ մատուցելուն ուղղված թիրախավորված առաջարկներ ներկայացնել մեկ կամ ավելի թվով անձանց հրապարակային վայրերում՝ նպատակ ունենալով համոզելու կամ հարկադրելու այդ անձանց օգտվելու զբոսաշրջային ծառայությունից, եթե առաջարկներ ներկայացնողն անձն իրավունք չունի մատուցել զբոսաշրջային ծառայություններ:
9. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները զբոսաշրջիկ չհանդիսացող անձանց և հանրության անդամներին կարող են մատուցել սննդի կազմակերպման և կացության հետ չառնչվող այլ ծառայություններ:
10. Հյուրանոցային տնտեսության օբյեկտը ներկայացնելիս կամ գովազդելիս արգելվում է տրամադրել հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակի կամ որակավորման կարգի մասին սխալ, կեղծ, ապակողմնորոշող կամ մոլորեցնող տեղեկատվություն կամ նշաններ:
11. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջիկներին մատուցել զբոսաշրջային ծառայություններ այն անձանց միջոցով կամ այն տրանսպորտային միջոցների օգտագործմամբ, որոնք զբոսաշրջային ծառայության տվյալ տեսակի համար «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով չեն ծանուցել կամ չեն որակավորվել կամ չեն ապահովել այդ ծառայությունների մատուցման կամ գործունեության նման տեսակի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված որակավորման, ծանուցման, ծառայությունները մատուցող անձի կազմակերպաիրավական տեսակին կամ գործունեությանը ներկայացվող այլ հատուկ պահանջները:

12. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային տրանսպորտային ծառայություններ մատուցել, առաջարկել կամ իրացնել կամ զբոսաշրջիկներին մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխել զբոսաշրջային ավտոբուս չհանդիսացող ավտոբուսով:
13. Արգելվում է զբոսաշրջային ավտոբուսը շահագործել առանց սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ձևի նշանը՝ զբոսաշրջային ավտոբուսի դիմապակու վրա՝ տեսանելի հատվածում փակցնելու:
14. Սույն օրենքով սահմանված պահանջների չպահպանմամբ զբոսաշրջային ծառայությունների մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հոդված 21. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը

1. Հյուրանոցային տնտեսության օբյեկտում՝ սպառողների համար տեսանելի հատվածում, ինտերնետային կայքում կամ գովազդային նյութերում հյուրանոցային տնտեսության օբյեկտը ներկայացնելիս պետք է նշվեն հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակը և անվանումը, իսկ սահմանված կարգով որակավորման կարգ ունենալու դեպքում՝ նաև համապատասխան որակավորման կարգի նշանը:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից առցանց կամ այլ հարթակներում հյուրանոցային ծառայությունների գովազդներում կամ հյուրանոցային ծառայություն մատուցելու մասին իր կողմից տարածվող հայտարարություններում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտում տեղադրվող տեղեկատվությանը ներկայացվող չափանիշները և տեղեկատվության տեղադրման կարգը:

Հոդված 22. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց կողմից անձնական տվյալների հավաքագրումը և պահպանումը

1. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձը վարում է կացության հետ կապված ծառայություններից օգտվող անձանց վերաբերյալ տվյալների գրանցամատյան:

2. Պետական լիազոր մարմնի ղեկավարը հաստատում է կացության հետ կապված ծառայություններից օգտվող անձանց վերաբերյալ տվյալների գրանցամատյանի վարման կարգը:

Հոդված 23. Զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր դրույթները

1. Զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պարտադիր դրույթները.

   1) զբոսաշրջային գործունեության սուբյեկտի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում անունը, ազգանունը), գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում հաշվառման հասցեն), հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը, պետական գրանցման (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման) և որպես ծանուցված գործունեություն՝ հաշվառման համարը,
   2) զբոսաշրջային փաթեթի նկարագրությունը և իրականացման ժամկետները,
   3) զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների նկարագրերը, ժամկետները, այդ թվում՝
      ա) տրանսպորտային միջոցների տեսակը,
      բ) ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը,
      գ) սննդի կազմակերպման պայմանները,
      դ) տեսարժան վայրերի այցելության ծրագրերը, մշակութային և այլ միջոցառումները (առկայության դեպքում),
   4) զբոսաշրջային փաթեթի գինը՝ բոլոր անհրաժեշտ վճարումների, հարկերի և տուրքերի մանրամասներով, գնի փոփոխման հանգեցնող հանգամանքների և այդ մասին սպառողին տեղեկացման ժամկետների ձևակերպմամբ,
   5) վճարման կարգը, ժամկետներն ու պայմանները,
   6) պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում կողմերի պատասխանատվությունը,
   7) զբոսաշրջային ապահովագրության վերաբերյալ տվյալները (եթե առկա է),
   8) անչափահասներին մատուցվող ծառայությունների դեպքում՝ երեխայի կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները,

9) սպառողների իրավունքների, պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությունը,
10) մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով փաթեթը չեղյալ հայտարարելու մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետը, եթե պայմանագրով փաթեթի իրականացման համար սահմանված է անհրաժեշտ նվազագույն քանակով մարդկանց առկայություն,
11) անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների (արտոնագրեր, սահմանային անցման, մաքսային և այլ ձևակերպումներ) տեղեկատվություն,
12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված այլ տեղեկատվություն:

2. Պետական լիազոր մարմնի ղեկավարը կարող է սահմանել զբոսաշրջային փաթեթի պայմանագրի օրինակելի ձևեր:

3. Սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե զբոսաշրջային փաթեթի պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ), կամ սպառողի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը փոխանցված գումարը չի փոխանցել այլ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց:
4. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա զբոսաշրջային փաթեթի պայմանագրով կարող է սահմանվել զբոսաշրջային փաթեթի վաղաժամկետ լուծման վճար՝ հաշվի առնելով նախքան զբոսաշրջային փաթեթի մեկնարկը պայմանագրիրը վաղաժամկետ լուծելու համար նախատեսված ծանուցման ժամկետը, ինչպես նաև ակնկալվող խնայված ծախսերը և այլընտրանքային զբոսաշրջային ծառայություններ մատուցելու դիմաց ստացված եկամուտները:
5. Հրապարակային պայմանների բացակայության դեպքում պայմանագրի լուծման վճարը համարժեք կլինի փաթեթի վճարի և զբոսաշրջային ծառայություններից օգտվելու համար խնայված ծախսերի ու եկամուտների հանրագումարի տարբերությանը: Սպառողի հարցմամբ զբոսաշրջային օպերատորը պարտավոր կլինի տրամադրել գրավոր հիմնավորում վաղաժամկետ լուծման վճարի չափի վերաբերյալ:

6. Կոմիտեն կարող է հրապարակել սույն հոդվածի 3-4-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային փաթեթի լուծման վճարի հաշվարկման մեթոդաբանությունը:
7. Զբոսաշրջային փաթեթի գինը կարող է փոփոխվել բացառապես այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված են դրա հիմքերը և պայմանները, որոնք բացառապես պայմանավորված են հետևյալ փոփոխություններով.

   1) տրանսպորտային ծառայությունների գների՝ կապված վառելիքի կամ այլ էներգակիրների գների փոփոխության հետ,
   2) հարկերի, տուրքերի, այլ պարտադիր վճարների,
   3) տարադրամի փոխարժեքի:

8. Զբոսաշրջային փաթեթի գինը չի կարող բարձրացվել առանց սպառողին զբոսաշրջային փաթեթի մեկնարկից առնվազն 21 օր առաջ համապատասխան հաշվարկներով հիմնավորված ծանուցման:

9. Սույն հոդվածի շրջանակներում գների բարձրացումը պայմանագրի գնի 8% և ավելի կազմելու դեպքում սպառողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և հրաժարվել փաթեթից առանց տուգանք վճարելու:

10. Սույն հոդվածի շրջանակներում գների բարձրացման դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտն իրավունք չունի սպառողից պահանջել հավելյալ վճար, եթե զբոսաշրջային գործունեության սուբյեկտի մեղքով սպառողի կողմից վճարված գումարը ժամանակին չի փոխանցվել զբոսաշրջային ծառայությունները մատուցող երրորդ անձանց, բացառությամբ եթե սպառողը ցանկանություն է հայտնել վճարելու գների տարբերություն:

Հոդված 24. Զբոսավարի և ուղեկցորդի պարտականությունները

1. Զբոսավարը և ուղեկցորդն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են՝
   1) համապատասխան մարմիններին անհապաղ տեղեկացնել զբոսաշրջիկների հետ տեղի ունեցած արտակարգ պատահարների, զբոսաշրջիկների շրջանում վարակիչ հիվանդության կասկածով անձանց հայտնաբերելու դեպքի մասին,
   2) իր գործունեության ընթացքում ունենալ և տեսանելի հատվածում կրել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ձևի անվանաքարտ,

3) պահպանել սույն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

2. Ուղեկցորդը պարտավոր է՝
   1) Ունենալ դժվարանցանելի երթուղիների իրականացման ընթացքում զբոսաշրջիկների անվտանգությունն ապահովող գիտելիք ու հմտություններ և անհրաժեշտության դեպքում կիրառել դրանք,
   2) ծառայություններ մատուցելու ամբողջ ժամանակահատվածում հնարավորության դեպքում ապահովել իր հասանելիությունը կապի միջոցներով,
   3) արտակարգ իրավիճակների, վնասվածքների և դժբախտ պատահարների դեպքում առաջին օգնություն ցուցաբերել և դրանց մասին ահազանգել իրավասու մարմիններին:

ԳԼՈՒԽ 6. ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 25. Զբոսաշրջիկի իրավունքները

Զբոսաշրջիկն իրավունք ունի՝ իր մայրենի լեզվով կամ այլ իրեն հասկանալի լեզվով, իսկ անհնարինության դեպքում միջազգայնորեն ընդունված առավել տարածված լեզվով զբոսաշրջային օպերատորից կամ զբոսաշրջային գործակալից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն ժամանման երկրի (վայրի)՝ զբոսաշրջության հետ առնչվող օրենքների և կենցաղավարության, տեղաբնակների սովորույթների, հասարակական և կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային, հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրության և զբոսաշրջային ծառայությունների տրամադրման պայմանների, ըստ անհրաժեշտության՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի (ներառյալ տրանսպորտի), տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության մասին:

ԳԼՈՒԽ 7. ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 26. Բողոքների քննությունը

1. Զբոսաշրջային ծառայություններ մատուցողի գործողությունների կամ մատուցված ծառայությունների որակի վերաբերյալ սպառողը բողոքներ է ներկայացնում Կոմիտե:

2. Բողոքների ուսումնասիրման և բողոքներին ընթացք տալու կարգը հաստատում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

3. Կոմիտեն ուսումնասիրում է ստացված բողոքները, անհրաժեշտության դեպքում դրանք վերահասցեագրում իրավասու վարչական մարմիններին՝ այդ մասին տեղյակ պահելով բողոքն ուղարկած անձին՝ գրավոր եղանակով կամ հայտնի էլեկտրոնային փոստին հասկանալի լեզվով հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

4. Կոմիտեն հրապարակում է բողոքների քննության արդյունքների վերաբերյալ տարեկան ամփոփ զեկույց իր ինտերնետային կայքում մինչև հաջորդ օրացուցային տարվա փետրվարի 20-ը:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 27. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքի 16-18-րդ և 23-24-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 8-րդ, 19-րդ և 22-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունիսի 30-ից:

4. 2003 դեկտեմբերի 17-ի «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքի հիման վրա որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտներ որակավորումը գործում է մինչև որակավորման վկայականներով սահմանված ժամկետի ավարտը: Ժամկետի ավարտից հետո տվյալ հյուրանոցային տնտեսության օբյեկտները որակավորվում են սույն օրենքով սահմանված կարգով:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 2003 դեկտեմբերի 17-ի «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

6. Սույն օրենքն ընդունվելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը և պետական լիազոր մարմինն հաստատում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերով, 7-րդ հոդվածի 2-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, 21-րդ հոդվածի 2-րդ մասով, 23-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը: Այս դրույթն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրվանից: Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական լիազոր մարմնի հաստատած

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

7. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, 14-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ հոդվածի 2-րդ մասով, 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

8. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 3-4-րդ մասերով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են մինչև 2025 թվականի հունիսի 30-ը

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին ընթերցում~~Երկրորդ ընթերցում

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

(Կ-647-10.08.2023-ՏՀ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

2. Սույն օրենքով կարգավորվում են զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմունքները, գործունեություն իրականացնող անձանց ներկայացվող պահանջների, ֆիզիկական անձանց հանգստի, շրջագայության~~, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման և պաշտպանության, զբոսաշրջային փաթեթի պայմանագրի կնքման, կատարման և դադարման~~ հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Զբոսաշրջային գործունեության իրավական կարգավորումը

2. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Օրենքի հիմնական հասկացությունները

2. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

40) **այցելու**՝ ֆիզիկական անձ, որը ցանկացած նպատակով (գործնական, հանգստի կամ անձնական այլ նպատակներով) ճանապարհորդում է իր հիմնական կացության վայրից այլ վայր մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ժամանման վայրում ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ կազմակերպության կողմից վճարվող աշխատանքի կամ ծառայության մեջ ~~ներգրավելու~~ներգրավվելու դեպքերի:

Սահմանային, սեզոնային կամ այլ կարճաժամկետ աշխատանքի, ~~ցակացած~~ցանկացած բնագավառում հեռավար (թվային) աշխատանքի, դիվանագիտական, հյուպատոսական, զինվորական աշխատանքի, երկարաժամկետ (մեկ տարի և ավել) կրթություն ստանալու, երկարաժամկետ (մեկ տարի և ավել) բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակներով ճանապարհորդող ֆիզիկական անձինք այցելու չեն համարվում.

41) **զբոսաշրջիկ**՝ այցելու, որը ժամանման վայրում անցկացնում է առնվազն մեկ գիշերակաց, սակայն ճանապարհորդությունը տևում է մինչև 1 տարի.

42) **մեկօրյա այցելու**՝ այցելու, որը ժամանման վայրում չի անցկացնում առնվազն մեկ գիշերակաց.

~~4) **սփյուռքահայ զբոսաշրջիկ՝** Հայաստանի Հանրապետություն ժամանող զբոսաշրջիկ, որը՝~~

~~ա. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի կամ քաղաքացի է, մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և Հայաստանի Հանրապետություն ժամանման նպատակը Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատելը չէ.~~

~~բ. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխանող օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձ:~~

43) ~~5)~~ **զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորում՝** - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ստեղծված ոչ առևտրային կազմակերպություն, ~~որին կամավորության սկզբունքով անդամակցում են~~որը միավորում է մեկ կամ մի քանի տեսակի զբոսաշրջային ծառայություններ մատուցող ~~անձինք.~~անձանց կամ ներկայացնում է այդ անձանց շահերը և սույն օրենքով սահմանված կարգով ընտրվելու դեպքում

որակավորում է զբոսաշրջային ծառայությունները կամ հյուրանոցային տնտեսության օբյեկտները.

44) 6) **զբոսաշրջություն**՝ ճանաչողական, հանգստի, հարազատներին այցելության, առողջարարական, վերականգնողական, գործնական, կրթական, կրոնական, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, համաժողովների, տոնակատարությունների, ցուցահանդեսների, մշակութային, բնապահպանական, գործառնական նշանակության և այլ բնույթի միջոցառումներին մասնակցելու և այլ նպատակներով մինչև 1 տարի ժամկետով ճանապարհորդություն հիմնական կացության վայրից այլ վայր.

45) 7) **Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ**՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի կետի իմաստով ռեզիդենտ համարվող ֆիզիկական անձ.

46) 8) **Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ**՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով կետի իմաստով ոչ ռեզիդենտ համարվող ֆիզիկական անձ.

47) 9) **ներգնա զբոսաշրջություն**՝ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տարածքում.

48) 10) **արտագնա զբոսաշրջություն**՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս.

49) 11) **ներքին զբոսաշրջություն**՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տարածքում.

50) 12) **զբոսաշրջային ծառայություններն** են.

ա. ուղևորափոխադրման,

բ. հյուրանոցային,

գ. էքսկուրսային,

դ. ավտոտրանսպորտային միջոցի վարձույթի,

ե. զբոսաշրջիկին մատուցվող կամ առաջարկվող որևէ այլ ծառայություն, որը սույն կետի ա.-դ). պարբերություններում թվարկված ծառայությունների անբաժանելի մաս չի կազմում.

51) 13) **զբոսաշրջային փաթեթ**՝ միևնույն այցելության ընթացքում առնվազն երկու տարբեր տեսակի զբոսաշրջային ծառայությունների համալիր, եթե

զբոսաշրջային ծառայությունները համակցվում են (ներառյալ՝ զբոսաշրջիկի ընտրությամբ) զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտի կողմից նախքան զբոսաշրջային փաթեթի մեկ միասնական պայմանագիր կնքելը, կամ առանձնացված պայմանագրեր կնքելու դեպքում՝ այդ զբոսաշրջային ծառայությունները՝

ա. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտից և համակցվում են մինչև գործարքի վճարման համար համաձայնություն տալը, կամ

բ. առաջարկվում, իրացվում կամ դրանց դիմաց վճարումը կատարվում է պայմանագրի ամբողջական գնով, իսկ ~~առանձանցված~~առանձնացված պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերի հանրագումարով (ներառական գին), կամ

գ. գովազդվում կամ իրացվում են «զբոսաշրջային փաթեթ» կամ նմանատիպ այլ եզրույթի կիրառմամբ, կամ

դ. զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելուց հետո համակցվում են զբոսաշրջիկի ընտրությամբ, կամ

ե. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության տարբեր սուբյեկտներից միմյանց հետ կապված առցանց ամրագրման ընթացակարգերով, երբ զբոսաշրջիկի հետ առաջին պայմանագիրը կնքած անձի կողմից զբոսաշրջիկի անձնական տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն և վճարման պայմանները փոխանցվում են ծառայություններ մատուցող երրորդ անձանց, իսկ ծառայություններ մատուցող երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվում են առաջին զբոսաշրջային ծառայության ամրագրման հաստատումից հետո 24 ժամվա ընթացքում.

52) ~~14)~~ **զբոսաշրջային փաթեթի պայմանագիր**՝ մեկ միասնական կամ ~~առանձանցված~~առանձնացված պայմանագրեր, որոնք ներառում են միևնույն այցելության ընթացքում ~~մատուցող~~մատուցվող զբոսաշրջային ծառայությունների պայմանները.

53) ~~15)~~ **զբոսաշրջային փաթեթի մեկնարկ**՝ զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների մատուցումը սկսելու ամսաթիվ.

54) ~~16)~~ **տուր**՝ առնվազն երկու տարբեր զբոսաշրջային ծառայությունների համալիր, որն առաջարկվում կամ իրացվում է մեկ ընդհանուր գնով, սակայն չի պարունակում գիշերակաց և իրականացվում է մինչև 24 ժամվա ~~ընթացում~~ընթացքում.

55)~~17)~~ **զբոսաշրջային ռեսուրսներ**՝ զբոսաշրջիկների մտավոր, նյութական, ֆիզիկական և այլ պահանջմունքների բավարարմանն ուղղված պատմամշակութային, կրոնական, բնական, մարդկային, առողջարարական, սոցիալ-տնտեսական, ենթակառուցվածքային և այլ ռեսուրսներ, որոնք կարող են հանդիսանալ զբոսաշրջային արդյունք կամ գրավչության օբյեկտ կամ ներառվել զբոսաշրջային փաթեթում.

56)~~18)~~ **զբոսաշրջային արդյունք (պրոդուկտ)**՝ մեկ կամ մի քանի զբոսաշրջային ռեսուրս կամ ծառայություն, որոնք առաջարկվում են զբոսաշրջիկին.

57)~~19)~~ **զբոսաշրջային գործունեության սուբյեկտ**՝ զբոսաշրջային օպերատոր կամ զբոսաշրջային գործակալ.

58)~~20)~~ **զբոսաշրջային օպերատոր**՝ իրավաբանական անձ, ~~որն~~որը ձևավորում և անմիջականորեն կամ զբոսաշրջային գործունեության այլ սուբյեկտի միջոցով կամ, զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի հետ համատեղ հանդես գալով, ~~համակցում և~~ իրացնում է կամ առաջարկում է զբոսաշրջային փաթեթ, տուր կամ այլ առանձին զբոսաշրջային ծառայություններ կամ փոխանցում է զբոսաշրջիկի տվյալները զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի՝ համաձայն սույն հոդվածի ~~13~~12-րդ կետի ե~~) համարակալված~~. պարբերության.

59)~~21)~~ **զբոսաշրջային գործակալ**՝ զբոսաշրջային օպերատոր չհանդիսացող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն անհատ զբոսաշրջիկին կամ զբոսաշրջիկների խմբին տրամադրում է զբոսաշրջության հետ կապված խորհրդատվություն կամ առաջարկում կամ վաճառում է զբոսաշրջային օպերատորի կողմից ~~համակցված~~ ձևավորված զբոսաշրջային փաթեթ կամ ~~մատուցում է~~առանձին զբոսաշրջային ծառայություններ.

60) ~~22)~~ **ներգնա զբոսաշրջային գործակալ**՝ ներգնա զբոսաշրջություն կազմակերպող զբոսաշրջային գործակալ.

61) ~~23)~~ **ներքին զբոսաշրջային գործակալ**՝ ներքին զբոսաշրջություն կազմակերպող զբոսաշրջային գործակալ.

62)~~24)~~ **արտագնա զբոսաշրջային գործակալ**՝ արտագնա զբոսաշրջություն կազմակերպող զբոսաշրջային գործակալ.

63) ~~25)~~ **զբոսավար**՝ սույն օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ստացած անձ, որը զբոսաշրջիկներին տրամադրում է տեղեկություններ հնագիտության, պատմության, նվաճումների, բնության, աշխարհագրության, պետության կառուցվածքի, զբոսաշրջային արդյունքի, հայ ժողովրդի և ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի,

~~կենցավարության~~կենցաղավարության մասին և զբոսաշրջային երթուղու շրջանակներում մատուցում է ~~կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝~~ զբոսաշրջիկներին ~~դիմավորում, տեղաբաշխում, տեղավորում~~դիմավորման, տեղաբաշխման, տեղավորման, սննդի ~~կազմակերպում~~կազմակերպման և ~~այլն.~~այլ ծառայություններ.

64) ~~26)~~ **ուղեկցորդ**՝ սույն օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող անձ, որը զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից տրամադրված երթուղու շրջանակներում ուղեկցում է զբոսաշրջիկներին, ապահովում է ժամանակին և պատշաճ որակով ծառայությունների մատուցումը և/կամ ֆիզիկական վնասվածքի ռիսկ պարունակող երթուղիների ընթացքում, տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված, իրականացնում է անվտանգության կանոնների հրահանգավորման և աջակցման գործառույթներ.

65) ~~27)~~ **զբոսաշրջային ավտոբուս**՝ առնվազն 9 նստատեղ (բացառությամբ վարորդի նստատեղի) և զբոսաշրջային ավտոբուսի որակավորում ունեցող ավտոտրանսպորտային միջոց, որով իրականացվում է զբոսաշրջիկների ոչ կանոնավոր փոխադրում.

66) ~~28)~~ **զբոսաշրջային երթուղի**՝ զբոսաշրջային գրավչության օբյեկտներ և վայրեր միավորող երթուղի.

67) ~~29)~~ **զբոսաշրջային ուղևորափոխադրող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը զբոսաշրջային ավտոբուսներով իրականացնում է ոչ կանոնավոր զբոսաշրջային ուղևորափոխադրումներ.

68) ~~30)~~ **զբոսաշրջային կենտրոն**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված նշանակալի զբոսաշրջային ռեսուրս պարունակող բնակավայր, վարչական շրջան կամ վարչատարածքային միավոր, ինչպես նաև դրանց համախումբ.

69) ~~31)~~ **զբոսաշրջային կենտրոնի կառավարման պլան**՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում զբոսաշրջային կենտրոնի կայուն զարգացման և կառավարման ծրագիր, որը կարող է բաղկացած լինել զբոսաշրջային կենտրոնում ներառված առանձին բնակավայրերի, վարչական շրջանների կամ վարչատարածքային միավորների զարգացման ծրագրերից.

70) ~~32)~~ **զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություն**՝ իրավաբանական անձ, որի գործառույթները սահմանվում են այդ կազմակերպության կանոնադրությամբ և կարող են ընդգրկել զբոսաշրջային ռեսուրսների թողունակության գնահատումը, զբոսաշրջային կենտրոնի

ճանաչելիության բարձրացումը, դեպի այդ կենտրոն զբոսաշրջիկների հոսքերի ուղղորդումը և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ զբոսաշրջային կենտրոնների կայուն զարգացումը.

71) ~~33)~~ **զբոսաշրջային փորձառություն**՝ մշակութային, ձեռագործ աշխատանքի, խոհարարության կամ արվեստի կամ արհեստի կամ այլ հատուկ գիտելիքներ կամ հմտություններ պահանջող անձի առաջնորդությամբ կամ ցուցումներով զբոսաշրջիկի ներգրավմամբ անցկացվող գործնական կամ տեսական պարապմունքների կամ դասընթացների կազմակերպում կամ անցկացում այդ գիտելիքների ցուցադրման կամ փոխանցման համար հատուկ հարմարեցված վայրերում, որով զբոսաշրջիկը կարող է ձեռք բերել այդ բնագավառի գիտելիքներ կամ հմտություններ՝ միաժամանակ ծանոթանալով հայկական կամ ազգային փոքրամասնությունների մշակույթին և ավանդույթներին.

72) ~~34)~~ **զբոսաշրջային գյուղ**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված նշանակալի զբոսաշրջային ռեսուրսներ պարունակող գյուղական բնակավայր.

73) ~~35)~~ **հյուրանոցային տնտեսության օբյեկտ**~~՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված օբյեկտներից յուրաքանչյուրը.~~՝ սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված օբյեկտ.

74) ~~36)~~ **հյուրանոցային ծառայություն մատուցող անձ**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ, որը սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ կառավարման իրավունքով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքով տիրապետում կամ կառավարում և շահագործում է հյուրանոցային տնտեսության օբյեկտ.

75) ~~37)~~ **հյուրանոցային համար**՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտում զբոսաշրջիկի կացության (գիշերակացի) համար կահավորված առանձնացված գույքային միավոր.

76) ~~38)~~ **սպառող**՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցումից օգտվող ֆիզիկական անձ.

77) ~~39)~~ **զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն՝** իրավաբանական անձ, որը ~~որակավորվում է պետական լիազոր մարմնի կողմից և~~ սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող

զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու.

78) **զբոսաշրջային գործունեություն՝** իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից զբոսաշրջային ծառայություններ մատուցելու գործունեություն:

ԳԼՈՒԽ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

2. ~~1.~~ Զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

6) ~~1)~~ հաստատում է զբոսաշրջության բնագավառում գործող ~~տնտեսավարողներին~~ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին օժանդակության ծրագրեր~~.~~.

7) ~~2)~~ ընդունում է զբոսաշրջային կենտրոններ, զբոսաշրջային գյուղեր հայտարարելու վերաբերյալ որոշումներ, տեղական ինքնակառավարման մարմինների հաստատած ծրագրերի դրույթների հաշվի առնմամբ հաստատում է դրանց կառավարման պլանը.

~~3) հիմնում է զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություն, հաստատում զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության կանոնադրությունը և կառուցվածքը.~~

8) ~~4)~~ սահմանում է անձի կյանքի կամ առողջության համար վտանգ պարունակող զբոսաշրջային ծառայությունների մատուցման որակական և տեխնիկական չափորոշիչները.

~~5) հաստատում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակները, դրանց կառավարման և շահագործման առանձնահատկությունները հյուրանոցային տնտեսության օբյեկտների և այդ օբյեկտներում մատուցվող ծառայությունների նվազագույն պահանջները.~~

9) հաստատում է զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը.

10) իրականացնում է սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 5. Զբոսաշրջության բնագավառում պետական լիազոր մարմնի լիազորությունները

2. ~~1.~~ Զբոսաշրջության բնագավառում պետական լիազոր մարմինը՝

7) ~~1)~~ հաստատում է զբոսաշրջության զարգացմանն ուղղված տարեկան ծրագրերը, ծրագրերի իրականացման միջոցառումների ժամանակացույցները և ծրագրերի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվները.

8) ~~2)~~ հաստատում է զբոսաշրջային կենտրոններ կամ զբոսաշրջային գյուղեր հայտարարելու համար պահանջվող նվազագույն չափանիշները, այդ թվում՝ քաղաքաշինական և բնապահպանական հատուկ նորմեր, զարգացման նպատակներ, խնդիրներ, միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում՝ աշխարհագրական առանձին տարածքների համար սահմանելով այդ տարածքների առանձնահատկություններից բխող նորմեր.

9) ~~3)~~ հաստատում է զբոսաշրջային երթուղիներ.

10) ~~4)~~ հաստատում է զբոսաշրջային փորձառությունների որակավորման չափանիշները, ընթացակարգերը, որակավորման վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը, որակավորման վկայականների ու տարբերանշանների ձևերը.

11) ~~5)~~ հաստատում է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկվող զբոսաշրջային օպերատորների հաշվառման, սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության հաշվետվական էլեկտրոնային համակարգում ընդգրկման և հաշվառված զբոսաշրջային օպերատորներին հաշվառումից հանելու կարգը.

12) ~~6)~~ իրականացնում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 6. Զբոսաշրջության կոմիտեի լիազորությունները

3. ~~1.~~ Զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հանդիսանում է զբոսաշրջության բնագավառում սույն օրենքով սահմանված լիազորություններ կրող իրավասու պետական մարմին:

4. ~~2.~~ Կոմիտեն՝

21) ~~1)~~ մշակում և պետական լիազոր մարմնի ղեկավարին է ներկայացնում սույն օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական լիազոր մարմնի կողմից հաստատման (սահմանման) ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի հետ.

22) ~~2)~~ մշակում է զբոսաշրջության բնագավառի ռազմավարությունը, զարգացման տարեկան ծրագրերը, ծրագրերի իրականացման միջոցառումների ժամանակացույցները և ծրագրերի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվները, ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը.

23) տեղական ինքնակառավարման մարմինների քննարկմանն է ներկայացնում զբոսաշրջային կենտրոնի կամ զբոսաշրջային գյուղի կարգավիճակի հայտարարման համար անհրաժեշտ առաջարկներ.

24) ~~3)~~ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնում է զբոսաշրջության զարգացման վերաբերյալ առաջարկություններ.

~~4) մշակում է զբոսաշրջության բնագավառի ռազմավարությունը, զարգացման պետական ծրագրերը, ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը.~~

25) ~~5)~~ վարում է զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանը.

26) ~~6)~~ վարում է զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանը.

27) ~~7)~~ միջազգային համագործակցության շրջանակներում մշակում և իրավասու պետական կառավարման մարմնի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ զբոսաշրջության բնագավառում միջգերատեսչական պայմանագրերի վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրյա գործընկերների հետ հարաբերություններում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը.

28) ~~8)~~ կազմակերպում է զբոսաշրջությանն ուղղված տեղեկատվական, գովազդային և հրատարակչական գործունեություն.

29) ~~9)~~ մշակում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ գովազդի բովանդակությունը և պատասխանատու է իր կողմից կազմված կամ պատվիրված գովազդներում, թերթոններում, հրապարակումներում տեղ գտած տեղեկատվության բովանդակության ճշգրտության, դրանցում վիրավորանք, զրպարտություն, Հայաստանի

Հանրապետության օրենսդրությունը կամ կնքված պայմանագրերի դրույթները խախտող տեղեկատվություն ներառելու համար.

30) ~~10)~~ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարցումների հիման վրա տրամադրում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ տեղեկատվություն~~.~~.

31) ~~11)~~ զբոսաշրջության բնագավառում ծառայությունների որակի բարձրացման նպատակով իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց.

~~12) հաշմանդամություն ունեցող անձանց համար զբոսաշրջային ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց՝ համագործակցելով համապատասխան լիազոր մարմնի հետ.~~

~~13) զբոսաշրջության բնագավառում ծառայությունների որակի բարձրացման նպատակով իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց.~~

32) ~~14)~~ հաշմանդամություն ունեցող անձանց համար զբոսաշրջային ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց՝ ~~համագործակցելով~~համագործակցելով համապատասխան լիազոր մարմնի հետ.

33) ~~15)~~ իրականացնում է զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների և զբոսաշրջային փորձառությունների~~, զբոսավարների և ուղեկցորդների մասնագիտական~~ որակավորում.

34) ~~16)~~ ապահովում է որակավորված զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների և զբոսաշրջային փորձառությունների պարբերական գնահատման աշխատանքները.

35) իրականացնում է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակում զբոսաշրջային օպերատորների հաշվառման գործընթացը.

36) ~~17)~~ իրականացնում է մարքեթինգային (այդ թվում՝ արտաքին շուկաների) ուսումնասիրություններ, վերլուծություններ.

37) ~~18)~~ իրականացնում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության ու հայկական զբոսաշրջային արդյունքի (այդ թվում՝ նաև գովազդատեղեկատվական նյութերի) ներկայացումը՝ խթանելով այն միջազգային միջոցառումներին (այդ թվում՝ մասնագիտացված ցուցահանդեսներին) մասնակցության, մամուլի, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային մարքեթինգի և հասարակության հետ կապերի այլ միջոցներով.

38) ~~19)~~ ներկայացնում է առաջարկություններ պետական իրավասու կառավարման մարմնին զբոսաշրջային ~~կենտրոնում~~կենտրոններում, զբոսաշրջային գյուղերում և զբոսաշրջության համար կարևոր նշանակություն ունեցող այլ վայրերում տնտեսական և քաղաքաշինական գործունեության չափորոշիչների վերաբերյալ.

39) ~~20)~~ հաստատում է Կոմիտեի պաշտոնական կայքի վարման կարգը.

40) ~~21)~~ իրականացնում է սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 3. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ

Հոդված 7. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյան

3. Էլեկտրոնային գրանցամատյանի վարման նպատակն է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվության հավաքման, մշակման և տրամադրման միջոցով նպաստել՝
   3) սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությանը.
   4) Հայաստանի Հանրապետության կողմից զբոսաշրջության բնագավառում պետական արդյունավետ քաղաքականության մշակմանը:
4. Էլեկտրոնային գրանցամատյանում գրանցված զբոսաշրջային ծառայություններ մատուցողների տեղեկատվության բովանդակությունը, ներկայացման և վարման կարգն ու ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 8. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանը

3. Զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի վարման կարգը, տվյալների բազայի բովանդակությունը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:
4. Զբոսաշրջային ռեսուրսների ~~գույքագրման և~~ գրանցամատյանի վարման գործընթացում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են Կոմիտեին տրամադրել զբոսաշրջային ռեսուրսների մասին տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 4. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՆՔ, ԴՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հոդված 9. Զբոսաշրջության բնագավառում որակավորումը

~~1. Զբոսաշրջային ավտոբուսները, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները, զբոսավարները և ուղեկցորդները որակավորվում են: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների և զբոսաշրջային փորձառությունների որակավորումը կամավոր է:~~

~~2. Զբոսաշրջության բնագավառում որակավորման էությունը, որակավորման ընթացակարգերը և կարգերը, որակավորման տրամադրման մերժման և որակավորումից զրկելու հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~3. Հյուրանոցային տնտեսության օբյեկտներին որակավորում տրամադրող զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման ընտրության չափանիշները և կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

6. Զբոսաշրջության բնագավառում որակավորումը պետական լիազոր մարմնի կամ սույն օրենքով սահմանված դեպքերում զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումների կողմից հյուրանոցային տնտեսության օբյեկտի, զբոսաշրջային ավտոբուսի, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի, զբոսավարի, ուղեկցորդի, զբոսաշրջային փորձառությունների՝ սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով

սահմանված չափորոշիչներին և պահանջներին համապատասխանության հաստատումն է:

7. Որակավորման արդյունքներով հյուրանոցային տնտեսության օբյեկտին տրամադրվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման կարգ, իսկ զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությանը, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնին, զբոսավարին, ուղեկցորդին, զբոսաշրջային ավտոբուսին և զբոսաշրջության փորձառություններին՝ որակավորում, կամ մերժվում է որակավորման կամ որակավորման կարգի տրամադրումը:
8. Որակավորում կամ որակավորման կարգ տրամադրելու դեպքում տրվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևի որակավորման վկայական:
9. Որակավորման կամ որակավորման կարգի տրամադրումը մերժվում է, եթե հյուրանոցային տնտեսության օբյեկտը, զբոսաշրջային ավտոբուսը, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունը, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, զբոսավարը, ուղեկցորդը կամ զբոսաշրջային փորձառությունը՝
   4) չի համապատասխանում սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափորոշիչներին և պահանջներին.
   5) «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցում իրականացնելու պարտականություն ունեցող անձը չի ծանուցել կամ գործունեությունը դադարել է, եթե առկա է ծանուցման պահանջ.
   6) որակավորման համար ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ:
10. Հյուրանոցային տնտեսության օբյեկտը, զբոսաշրջային ավտոբուսը, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունը, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, զբոսավարը, ուղեկցորդը, զբոսաշրջային փորձառությունները զրկվում են սույն օրենքով սահմանված կարգով տրված որակավորումից կամ որակավորման կարգից, եթե ի հայտ են եկել սույն հոդվածի 4-րդ մասի 1-2 կետերով սահմանված հիմքերը:

Հոդված 10. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց դասակարգումը

3. Զբոսաշրջային ծառայություն մատուցող անձինք են.
1) հյուրանոցային ծառայություն մատուցող անձը,
2) զբոսաշրջային օպերատորը,
3) զբոսաշրջային գործակալը,
4) զբոսավարը,
5) ուղեկցորդը,
6) զբոսաշրջային ավտոբուսով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող անձը,
7) սույն օրենքի 3-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված այլ ծառայություններ մատուցող անձինք:
4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործունեությունը ենթակա է ծանուցման «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 11. Հյուրանոցային ծառայությունները

3. Հյուրանոցային ծառայություններն են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման հետ կապված, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ծառայությունները:
4. Նվազագույն հյուրանոցային ծառայություններն են՝
1) կացարանի և սանհանգույցի տրամադրումը,
2) կացարանի ու սանհանգույցի մաքրումը և անկողնու հարդարումը:

Հոդված 12. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների ~~դասակարգումը~~տեսակների նվազագույն պահանջները

11. Հյուրանոցը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ և առկա է առնվազն 10 հյուրանոցային համար, որոնցից առնվազն 3-ը՝ մեկ կամ երկտեղանոց համարներով:
12. Ափարթհոթել (aparthotel)՝ հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար հարմարեցված, խոհանոցային հատված ունեցող և համապատասխան

սարքավորումներով կահավորված, համեմատաբար երկար ժամկետով մնացող սպառողների համար նախատեսված շինություն, որը նախատեսված չէ սպառողների մշտական բնակության համար:

13. Մոթելը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որը գտնվում է միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարևանությամբ, բաղկացած է մեկ կամ մի քանի շինություններից կամ կազմում է որևէ շինության մաս, ունի առնվազն 6 հյուրանոցային համար (մեկ կամ երկտեղանոց) և որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ: Մոթելում, որպես կանոն, մատուցվում են նաև ավտոմեքենաների կայանման և տեխնիկական սպասարկման ծառայություններ:
14. Առողջարանը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ բացի նվազագույն հյուրանոցային ծառայություններից, մատուցվում են նաև հատուկ կարգի ծառայություններ (առողջարանային, բուժական, վերականգնողական)՝ օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում մատուցվում է նաև բժշկական օգնություն և սպասարկում:
15. Հոսթելը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ, բացի նվազագույն հյուրանոցային ծառայություններից, տրամադրվում են ինքնասպասարկման հնարավորություններ: Հոսթելն ունի գիշերելու համար առնվազն 10 ննջատեղ:
16. Մասնագիտացված ճամբարը կամ տունը շարժական կամ անշարժ հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ կամ որին հարակից տարածքներում մատուցվում են հյուրանոցային ծառայություններ որոշակի մասնագիտացված անձանց (մշակութային, հնագիտական, գյուղատնտեսական, բնապահպանական, մանկապատանեկան (դպրոցահասակ զբոսաշրջիկների համար), մարզական, որսորդական, ձկնորսական, լեռնամագլցման և այլն):
17. Հանգստյան տունը (պանսիոնը) հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ, որպես կանոն, այցելում են ժամանցի, արձակուրդի և հանգստի այլ ձևերի նպատակով և որտեղ բացի նվազագույն հյուրանոցային ծառայություններից, օրական առնվազն 3 անգամ կազմակերպվում և մատուցվում են սննդի ծառայություններ:
18. Ճամբարային բնակատեղին (թեմփինգ) հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ գիշերակացի և սննդի կազմակերպման ծառայությունները մատուցվում են շարժական գույքի օգտագործմամբ կամ վրաններում:
19. Զբոսաշրջային տունը (B&B) ֆիզիկական անձի (հյուրընկալի) կողմից տիրապետվող և օգտագործվող ու բնակության համար նախատեսված տուն կամ բնակարան է, որը, ձևափոխվելով և հարմարեցվելով զբոսաշրջիկներ

հյուրընկալելու համար, իր հարմարություններով մատուցում է նախաճաշի տրամադրմամբ զուգորդվող նվազագույն հյուրանոցային ծառայություններ: Որպես կանոն, հյուրընկալը բնակվում է այդ տանը, իսկ նախաճաշը պատրաստում է հյուրընկալը կամ նրա ընտանիքի անդամը:

20. Հյուրատունը հյուրանոցային ծառայություններ մատուցող բնակելի տուն կամ առանձին շինություն կամ շինությունների համակցություն է, որն ընդհանուր առմամբ ունի առավելագույնը 9 առանձնացված հյուրանոցային համար:

Հոդված 13. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը

9. Հյուրանոցային ծառայությունները մատուցվում են բացառապես հյուրանոցային տնտեսության օբյեկտներում:
10. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները ~~որակավորվում~~կարող են~~:~~ որակավորվել: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը կամավոր է:
11. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ~~ժամկետըսահմանում~~ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
12. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումն իրականացնում է սույն հոդվածով սահմանված կարգով ընտրված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքի:
13. Հյուրանոցային տնտեսության օբյեկտներին որակավորում տրամադրող զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման ընտրության չափանիշները և կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
14. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման պահանջը համարվում է բավարարված, եթե վերջինս ունի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխանող միջազգային որակավորում:
15. Մրցույթով ընտրված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը ընտրվելուց հետո իր կանոնադրության փոփոխությունները համաձայնեցնում է Կոմիտեի հետ, եթե այդ փոփոխությունները կարող են հանգեցնել կամ ազդեցություն ունենալ որակավորման գործառույթի վրա:

16. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված միավորման կողմից ընտրության մրցույթը չկայանալու, մրցույթի արդյունքներն անվավեր ճանաչվելու կամ այլ հիմքով մրցույթի միջոցով ընտրություն կազմակերպելու անհնարինության դեպքում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը իրականացնում է Կոմիտեն՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

Հոդված ~~13.~~ 14. Հյուրանոցային ծառայություններին ներկայացվող պահանջները

3. Պետական լիազոր մարմնի ղեկավարը հաստատում է հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց ներքին կանոնակարգի նվազագույն պահանջները:
4. Նոր կառուցվող հյուրանոցներում և առողջարաններում պետք է ապահովված լինի հաշմանդամություն ունեցող անձանց համար հյուրանոցային ծառայություններից օգտվելու և ծառայությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու հնարավորություն, որի մասին տեղեկատվությունը տեղադրվում և մշտապես պահվում է հյուրերի համար տեսանելի հատվածներում:

Հոդված ~~14.~~ 15. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների նկատմամբ պահանջները

11. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցման կանոններ և պահանջներ:
12. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտը ծանուցման հետ միասին պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կանոններին և պահանջներին իր համապատասխանության վերաբերյալ:
13. Զբոսաշրջային օպերատորը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված ծանուցման հետ միաժամանակ պարտավոր է ներկայացնել սույն հոդվածով նախատեսված երաշխիք, եթե նախատեսում է մատուցել արտագնա զբոսաշրջության հետ կապված ծառայություններ:
14. Արտագնա զբոսաշրջային գործակալը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված ծանուցման հետ միաժամանակ պարտավոր է ներկայացնել երաշխիք, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:

15. Արտագնա զբոսաշրջային գործակալը չի ներկայացնում երաշխիք, եթե առաջարկում կամ վաճառում է բացառապես զբոսաշրջային օպերատորի կողմից ~~համակցված~~ձևավորված զբոսաշրջային փաթեթներ կամ այդպիսի ծառայություններ է մատուցում զբոսաշրջային օպերատորի անունից:
16. Զբոսաշրջային օպերատորի և արտագնա զբոսաշրջային գործակալի կողմից երաշխիքի ձևը, նպատակը, չափերը, պարբերականությունը, ներկայացման կարգը~~ և~~, երաշխիքի տեքստի օրինակելի ձևը, երաշխիք տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը, երաշխիքով պահանջ ներկայացնելու, երաշխիքի գումարը բաշխելու և երաշխիքը դադարեցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
17. Զբոսաշրջային օպերատորը և արտագնա զբոսաշրջային գործակալը կարող են ներկայացնել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և լիցենզավորված բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական ընկերությունների տրամադրած երաշխիքներ, եթե այդ երաշխիքները բավարարում են սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով երաշխիքների համար սահմանված պայմաններին:
18. Երաշխիքը հետկանչման ենթակա չէ: Երաշխիքով ապահովվում են սպառողների նկատմամբ զբոսաշրջային օպերատորի կամ արտագնա զբոսաշրջային գործակալի ստանձնած պարտավորությունները:
19. Երաշխիքով որպես պարտատեր (բենեֆիցիար) հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական լիազոր մարմնի: Երաշխիքով պահանջը երաշխիք թողարկած անձին Հայաստանի Հանրապետության անունից ներկայացնում է պետական լիազոր մարմինը:
20. Երաշխիքով պահանջ ներկայացվում է, եթե երաշխիքը ներկայացրած զբոսաշրջային օպերատորը կամ արտագնա զբոսաշրջային գործակալը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում կամ հրաժարվում է կատարել սպառողի հանդեպ ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում անհնար է դարձել զբոսաշրջիկի կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձի մեկնումը Հայաստանի Հանրապետությունից կամ վերադարձը Հայաստանի Հանրապետություն:

Հոդված ~~15.~~ 16. Զբոսաշրջային ավտոբուսների որակավորումը

5. ~~1.~~ Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային երթուղիների կազմակերպման համար զբոսաշրջային օպերատորները, ներգնա և ներքին զբոսաշրջային գործակալները (այդ թվում՝ օտարերկրյա գրանցում ունեցող զբոսաշրջային օպերատորները և զբոսաշրջային գործակալները) պարտավոր են իրենց ծառայություններից օգտվողներին մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխել կամ զբոսաշրջային երթուղին կազմակերպել միայն զբոսաշրջային ավտոբուսների միջոցով, եթե այդ անձանց քանակը հավասար է կամ գերազանցում է 9-ը:
6. Զբոսաշրջային ավտոբուսները որակավորվում են: Զբոսաշրջային ավտոբուսների որակավորումը պարտադիր է:
7. Զբոսաշրջային ավտոբուսների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը, չափորոշիչները, որակավորման վկայականի ու նշանի ձևերը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
~~5.~~8. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ձևի նշանը փակցվում է զբոսաշրջային ավտոբուսի դիմապակու վրա՝ տեսանելի հատվածում:

Հոդված 17. Զբոսաշրջային ավտոբուսի կայանումը և կանգառը

3. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են համայնքի վարչական սահմաններում գտնվող զբոսաշրջային գրավչություններին հարակից տարածքներում առանձնացնել առնվազն երեք զբոսաշրջային ավտոբուսների համար կայանատեղի, եթե այդ տարածքները համարվում են պետական կամ համայնքային սեփականություն և բացակայում են նման որոշման կայացման համար օրենքով սահմանված արգելքները:
4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կայանատեղիները կազմակերպվում են զբոսաշրջային գրավչության օբյեկտի հարևանությամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով հանրության մուտքը և ելքը:

Հոդված ~~17~~18.Զբոսավարների և ուղեկցորդների որակավորումը

5. Զբոսավարները և ուղեկցորդները որակավորվում են: Զբոսավարների և ուղեկցորդների որակավորումը պարտադիր է:

6. Զբոսավարների և ուղեկցորդների որակավորման պահանջները, որակավորման ընթացակարգը, վերապատրաստման ծրագիրը, կարգը, պարբերականությունը և ժամկետները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը, զբոսավարների ու ուղեկցորդների անվանաքարտերի ձևերը, մասնագիտացման ուղղությունները, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7. Հայաստանի Հանրապետությունում զբոսավարների և ուղեկցորդների գործունեությունը ենթակա է ծանուցման «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված կարգով, բացառությամբ եթե աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով այդ անձինք կատարում են զբոսավարի կամ ուղեկցորդի գործառույթներ զբոսաշրջային գրավչության օբյեկտը շահագործող կամ կառավարող կազմակերպությունում:
8. Ծանուցված զբոսավարները և ուղեկցորդները պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով, պարբերականությամբ և ժամկետներում մասնակցել ուսուցման ազգային ռեեստրում գրանցված անձանց կողմից իրականացվող զբոսավարների, ուղեկցորդների մասնագիտական որակավորման և վերապատրաստման դասընթացներին:

Հոդված ~~18.~~ 19. Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորումը

5. ~~1.~~ Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունները որակավորվում են: Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների որակավորումը պարտադիր է:
6. Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները ~~որակավորվում~~կարող են որակավորվել: Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորումը ~~պարտադիր~~կամավոր է:
7. ~~2.~~ Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների որակավորման ընթացակարգը, չափորոշիչները (այդ թվում՝ զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության գործառույթներին, կառուցվածքին վերաբերող նվազագույն պահանջները), որակավորման վկայականի ձևը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման

դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Որակավորված զբոսաշրջային տեղեկատվական ~~կենտրոնին~~կենտրոններին շնորհվում է տարբերանշան: Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորման ընթացակարգը և տարբերանշանի ձևը, չափորոշիչները, որակավորման վկայականի ձևը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 5. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված ~~19.~~20. Զբոսաշրջության ծառայությունների մատուցման արգելքը

15. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է մատուցել սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային ծառայություններ, եթե զբոսաշրջային ծառայություններ մատուցելու մտադրություն ունեցող անձը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով չի ծանուցել:
16. Զբոսավարը կարող է գործունեություն իրականացնել որպես՝
    3) անհատ ձեռնարկատեր, կամ
    4) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, եթե զբոսավարի ծառայություններ մատուցում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրի հիման վրա:
17. Զբոսավարը կարող է մատուցել միայն զբոսավարի ծառայություն, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:
18. Անհատ ձեռնարկատեր հանդես գալու դեպքում զբոսավարն այլ զբոսաշրջային ծառայություններ կարող է մատուցել, եթե բավարարում է զբոսաշրջային ծառայության տվյալ տեսակի համար սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցել է:
19. Ուղեկցորդը կարող է գործունեություն իրականացնել որպես՝
    3) անհատ ձեռնարկատեր, կամ

4) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, եթե ուղեկցորդի ծառայություններ մատուցում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրի հիման վրա:

20. Ուղեկցորդը կարող է մատուցել միայն ուղեկցորդի ծառայություն, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի:
21. Որպես անհատ ձեռնարկատեր հանդես գալու դեպքում ուղեկցորդն այլ զբոսաշրջային ծառայություններ կարող է մատուցել, եթե բավարարում է զբոսաշրջային ծառայության տվյալ տեսակի համար սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցել է:
22. Արգելվում է զբոսաշրջային ծառայություններ մատուցելուն ուղղված թիրախավորված առաջարկներ ներկայացնել մեկ կամ ավելի թվով անձանց հրապարակային վայրերում՝ նպատակ ունենալով համոզելու կամ հարկադրելու այդ անձանց օգտվելու զբոսաշրջային ծառայությունից, եթե առաջարկներ ներկայացնողն անձն իրավունք չունի մատուցել զբոսաշրջային ծառայություններ:
23. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները զբոսաշրջիկ չհանդիսացող անձանց և հանրության անդամներին կարող են մատուցել սննդի կազմակերպման և կացության հետ չառնչվող այլ ծառայություններ:
24. Հյուրանոցային տնտեսության օբյեկտը ներկայացնելիս կամ գովազդելիս արգելվում է տրամադրել հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակի կամ որակավորման կարգի մասին սխալ, կեղծ, ապակողմնորոշող կամ մոլորեցնող տեղեկատվություն կամ նշաններ:
25. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջիկներին մատուցել զբոսաշրջային ծառայություններ այն անձանց միջոցով կամ այն տրանսպորտային միջոցների օգտագործմամբ, որոնք զբոսաշրջային ծառայության տվյալ տեսակի համար «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով չեն ծանուցել կամ չեն որակավորվել կամ չեն ապահովել այդ ծառայությունների մատուցման կամ գործունեության նման տեսակի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված որակավորման, ծանուցման, ծառայությունները մատուցող անձի կազմակերպաիրավական տեսակին կամ գործունեությանը ներկայացվող այլ հատուկ պահանջները:

26. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային տրանսպորտային ծառայություններ մատուցել, առաջարկել կամ իրացնել կամ զբոսաշրջիկներին մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխել զբոսաշրջային ավտոբուս չհանդիսացող ավտոբուսով:
27. Արգելվում է զբոսաշրջային ավտոբուսը շահագործել առանց սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ձևի նշանը՝ զբոսաշրջային ավտոբուսի դիմապակու վրա՝ տեսանելի հատվածում փակցնելու:
28. Սույն օրենքով սահմանված պահանջների չպահպանմամբ զբոսաշրջային ծառայությունների մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հոդված 21. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը

3. Հյուրանոցային տնտեսության օբյեկտում՝ սպառողների համար տեսանելի հատվածում, ինտերնետային կայքում կամ գովազդային նյութերում հյուրանոցային տնտեսության օբյեկտը ներկայացնելիս պետք է նշվեն հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակը և անվանումը, իսկ սահմանված կարգով որակավորման կարգ ունենալու դեպքում՝ նաև համապատասխան որակավորման կարգի նշանը:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից առցանց կամ այլ հարթակներում հյուրանոցային ծառայությունների գովազդներում կամ հյուրանոցային ծառայություն մատուցելու մասին իր կողմից տարածվող հայտարարություններում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտում տեղադրվող տեղեկատվությանը ներկայացվող չափանիշները և տեղեկատվության տեղադրման կարգը:

Հոդված ~~20.~~ 22. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց կողմից անձնական տվյալների հավաքագրումը և պահպանումը

3. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձը վարում է կացության հետ կապված ծառայություններից օգտվող անձանց վերաբերյալ տվյալների գրանցամատյան:

4. Պետական լիազոր մարմնի ղեկավարը հաստատում է կացության հետ կապված ծառայություններից օգտվող անձանց վերաբերյալ տվյալների գրանցամատյանի վարման կարգը:

Հոդված ~~*21. Սպառողի հետ կնքվող*~~ 23. Զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր դրույթները

2. ~~Սպառողի հետ զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի~~Զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պարտադիր դրույթները.

13) ~~1)~~ զբոսաշրջային ~~օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի~~գործունեության սուբյեկտի լրիվ անվանումը (~~ֆիզիկական անձի~~անհատ ձեռնարկատիրոջ դեպքում անունը, ազգանունը), գտնվելու վայրը~~,~~ (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում հաշվառման հասցեն), հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը, պետական գրանցման (~~ֆիզիկական անձի~~անհատ ձեռնարկատիրոջ դեպքում ~~պետական~~՝ հաշվառման) և որպես ծանուցված գործունեություն՝ հաշվառման համարը,

14) զբոսաշրջային փաթեթի նկարագրությունը և իրականացման ժամկետները,

15) զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունների նկարագրերը, ժամկետները, այդ թվում՝

ա) տրանսպորտային միջոցների տեսակը,

բ) ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը,

գ) սննդի կազմակերպման պայմանները,

դ) տեսարժան վայրերի այցելության ծրագրերը, մշակութային և այլ միջոցառումները (առկայության դեպքում),

16) զբոսաշրջային փաթեթի գինը՝ բոլոր անհրաժեշտ վճարումների, հարկերի և տուրքերի մանրամասներով, գնի փոփոխման հանգեցնող հանգամանքների և այդ մասին սպառողին տեղեկացման ժամկետների ձևակերպմամբ,

17) վճարման կարգը, ժամկետներն ու պայմանները,

18) պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում կողմերի պատասխանատվությունը,

19) զբոսաշրջային ապահովագրության վերաբերյալ տվյալները (եթե առկա է),

20) անչափահասներին մատուցվող ծառայությունների դեպքում՝ երեխայի կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները,
21) սպառողների իրավունքների, պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությունը,
22) մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով փաթեթը չեղյալ հայտարարելու մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետը, եթե պայմանագրով փաթեթի իրականացման համար սահմանված է անհրաժեշտ նվազագույն քանակով մարդկանց առկայություն,
~~13)~~23) անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների (արտոնագրեր, սահմանային անցման, մաքսային և այլ ձևակերպումներ) տեղեկատվություն,
24) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված այլ տեղեկատվություն:

11. Պետական լիազոր մարմնի ղեկավարը կարող է սահմանել զբոսաշրջային փաթեթի պայմանագրի օրինակելի ձևեր:

12. Սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե զբոսաշրջային փաթեթի պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ), կամ սպառողի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը փոխանցված գումարը չի փոխանցել այլ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց:
13. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա զբոսաշրջային փաթեթի պայմանագրով կարող է սահմանվել զբոսաշրջային փաթեթի վաղաժամկետ լուծման վճար՝ հաշվի առնելով նախքան զբոսաշրջային փաթեթի մեկնարկը պայմանագրիրը վաղաժամկետ լուծելու համար նախատեսված ծանուցման ժամկետը, ինչպես նաև ակնկալվող խնայված ծախսերը և այլընտրանքային զբոսաշրջային ծառայություններ մատուցելու դիմաց ստացված եկամուտները:
14. Հրապարակային պայմանների բացակայության դեպքում պայմանագրի լուծման վճարը համարժեք կլինի փաթեթի վճարի և զբոսաշրջային ծառայություններից օգտվելու համար խնայված ծախսերի ու եկամուտների հանրագումարի տարբերությանը: Սպառողի հարցմամբ զբոսաշրջային

օպերատորը պարտավոր կլինի տրամադրել գրավոր հիմնավորում վաղաժամկետ լուծման վճարի չափի վերաբերյալ:

15. Կոմիտեն կարող է հրապարակել սույն հոդվածի 3-4-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային փաթեթի լուծման վճարի հաշվարկման մեթոդաբանությունը:

16. Զբոսաշրջային փաթեթի գինը կարող է ~~փոխվել~~փոփոխվել բացառապես այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված են դրա հիմքերը և պայմանները, որոնք բացառապես պայմանավորված են հետևյալ փոփոխություններով.

4) տրանսպորտային ծառայությունների գների՝ կապված վառելիքի կամ այլ էներգակիրների գների փոփոխության հետ,
5) հարկերի, տուրքերի, այլ պարտադիր վճարների,
6) տարադրամի փոխարժեքի:

17. Զբոսաշրջային փաթեթի գինը չի կարող բարձրացվել առանց սպառողին զբոսաշրջային փաթեթի մեկնարկից առնվազն 21 օր առաջ համապատասխան հաշվարկներով հիմնավորված ծանուցման:

18. Սույն հոդվածի շրջանակներում գների բարձրացումը պայմանագրի գնի 8% և ավելի կազմելու դեպքում սպառողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և հրաժարվել փաթեթից առանց տուգանք վճարելու:

19. Սույն հոդվածի շրջանակներում գների բարձրացման դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտն իրավունք չունի սպառողից պահանջել հավելյալ վճար, եթե զբոսաշրջային գործունեության սուբյեկտի մեղքով սպառողի կողմից վճարված գումարը ժամանակին չի փոխանցվել զբոսաշրջային ծառայությունները մատուցող երրորդ անձանց, բացառությամբ եթե սպառողը ցանկանություն է հայտնել վճարելու գների տարբերություն:

Հոդված ~~22.~~ 24. Զբոսավարի և ուղեկցորդի պարտականությունները

3. Զբոսավարը և ուղեկցորդն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են՝

~~1) հարգել զբոսաշրջիկի արժանապատվությունը, ավանդույթները, սովորույթները, կրոնական համոզմունքները և ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից կամ արտահայտություններից, որոնք կարող են վիրավորել զբոսաշրջիկի մշակույթը, կրոնական համոզմունքները և այլ հավատալիքները,~~

4) ~~2)~~ համապատասխան մարմիններին անհապաղ տեղեկացնել ~~զբոսաշրջիկի~~զբոսաշրջիկների հետ տեղի ունեցած արտակարգ պատահարների, զբոսաշրջիկների շրջանում վարակիչ հիվանդության կասկածով անձանց հայտնաբերելու դեպքի մասին ~~մասին~~,

5) ~~3)~~ իր գործունեության ընթացքում ունենալ և տեսանելի հատվածում կրել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ձևի անվանաքարտ,

6) ~~4)~~ պահպանել սույն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

4. Ուղեկցորդը պարտավոր է՝

4) Ունենալ դժվարանցանելի երթուղիների իրականացման ընթացքում զբոսաշրջիկների անվտանգությունն ապահովող գիտելիք ~~և~~ու հմտություններ և անհրաժեշտության դեպքում կիրառել դրանք,

5) ծառայություններ մատուցելու ամբողջ ժամանակահատվածում հնարավորության դեպքում ապահովել իր հասանելիությունը կապի միջոցներով,

6) արտակարգ իրավիճակների, վնասվածքների և դժբախտ պատահարների դեպքում առաջին օգնություն ~~ցուցաբերելը~~ցուցաբերել և դրանց մասին ահազանգել իրավասու մարմիններին:

ԳԼՈՒԽ 6. ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված ~~23.~~ 25. Զբոսաշրջիկի իրավունքները

Զբոսաշրջիկն իրավունք ունի՝ իր մայրենի լեզվով կամ այլ իրեն հասկանալի լեզվով, իսկ անհնարինության դեպքում միջազգայնորեն ընդունված առավել տարածված լեզվով զբոսաշրջային օպերատորից կամ զբոսաշրջային գործակալից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն ժամանման երկրի (վայրի)՝ զբոսաշրջության հետ առնչվող օրենքների և ~~կենցավարության~~կենցաղավարության, տեղաբնակների սովորույթների, հասարակական և կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային, հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրության և զբոսաշրջային ծառայությունների տրամադրման ~~պայմանների մասին:~~ պայմանների, ըստ անհրաժեշտության՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի (ներառյալ տրանսպորտի), տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության մասին:

ԳԼՈՒԽ 7. ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 26. Բողոքների քննությունը

5. Զբոսաշրջային ծառայություններ մատուցողի գործողությունների կամ մատուցված ծառայությունների որակի վերաբերյալ սպառողը բողոքներ է ներկայացնում Կոմիտե:

6. Բողոքների ուսումնասիրման և բողոքներին ընթացք տալու կարգը հաստատում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

7. Կոմիտեն ուսումնասիրում է ստացված բողոքները, անհրաժեշտության դեպքում դրանք վերահասցեագրում իրավասու վարչական մարմիններին՝ այդ մասին տեղյակ պահելով բողոքն ուղարկած անձին՝ գրավոր եղանակով կամ հայտնի էլեկտրոնային փոստին հասկանալի լեզվով հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

8. Կոմիտեն հրապարակում է բողոքների քննության արդյունքների վերաբերյալ տարեկան ամփոփ զեկույց իր ինտերնետային կայքում մինչև հաջորդ օրացուցային տարվա փետրվարի 20-ը:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված ~~*24. Անցումային*~~27. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ~~հունիսի 30~~սեպտեմբերի 1-ից~~, բացառությամբ սույն հոդվածի 2-3-րդ, 6-8-րդ մասերի:~~:

10. Սույն օրենքի ~~15-17-րդ, 20~~16-18-րդ և ~~21~~23-24-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

11. Սույն օրենքի 8-րդ, ~~18~~19-րդ և ~~19~~22-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունիսի 30-ից:

12. 2003 դեկտեմբերի 17-ի «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»~~ Հայաստանի Հանրապետության~~ օրենքի հիման վրա որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտներ որակավորումը գործում է մինչև որակավորման վկայականներով սահմանված ժամկետի ավարտը: Ժամկետի ավարտից հետո տվյալ հյուրանոցային տնտեսության օբյեկտները որակավորվում են սույն օրենքով սահմանված կարգով:

13. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 2003 դեկտեմբերի 17-ի «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

14. Սույն օրենքն ընդունվելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը և պետական լիազոր մարմինն հաստատում են սույն օրենքի ~~3-րդ հոդվածի 35-րդ կետով, 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,~~ 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերով, 7-րդ հոդվածի 2-րդ մասով, ~~9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 12-րդ հոդվածի 2-րդ մասով, 14~~15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, 21-րդ հոդվածի 2-րդ մասով, 23-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը մինչև 2024 թվականի ~~հունիսի 30~~սեպտեմբերի 1-ը~~:~~: Այս դրույթն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրվանից~~:~~: Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական լիազոր մարմնի հաստատած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում 2024 թվականի ~~հունիսի 30~~սեպտեմբերի 1-ից:

15. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, 14-րդ հոդվածի 1-ին մասով, ~~15-րդ հոդվածի 2-րդ մասով, 17~~16-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ հոդվածի 2-րդ մասով, ~~20~~23-րդ հոդվածի 2-րդ մասով~~, 21-րդ հոդվածով~~ նախատեսված իրավական ակտերն ընդունվում են մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

16. Սույն օրենքի ~~3-րդ հոդվածի 4-րդ կետի բ) պարբերությամբ,~~ 4-րդ հոդվածի 1-ին մասի ~~4~~3-րդ կետով, 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, ~~18-րդ հոդվածի 2-րդ մասով,~~ 19-րդ հոդվածի 3-4-րդ մասերով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են մինչև 2025 թվականի հունիսի 30-ը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-647-10.08.2023-ՏՀ-011/1) «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-647[1]-10.08.2023-ՏՀ-011/1), «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-647[2]-10.08.2023-ՏՀ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-647[3]-10.08.2023-ՏՀ-011/1), «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-647[4]-10.08.2023-ՏՀ-011/1), «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-647[5]-10.08.2023-ՏՀ-011/1), «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-647[6]-10.08.2023-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» (Կ-647[7]-10.08.2023-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»					
1.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածից հանել «ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման և պաշտպանության, զբոսաշրջային փաթեթի պայմանագրի կնքման, կատարման և դադարման հետ կապված հարաբերությունները»՝	Ընդունվել է	Ընդունվել է

			սահմանման մեջ թողնելով միայն Օրենքի կարգավորման բուն առարկան և զբոսաշրջության ոլորտի գործունեության իրավահարաբերությունները:		
2.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետեր	Նախագծի հոդված 3-ում օգտագործված մի շարք հասկացություններ, այդ թվում՝ «մեկօրյա այցելու», «սփյուռքահայ զբոսաշրջիկ» հասկացությունները, հետագա կիրառում չունեն, հետևաբար, կարծում եմ, անիմաստ է կիրառումը ու առաջարկում եմ հանել նախագծից:	Ընդունվել է մասամբ՝ 1. 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «Մեկօրյա այցելու» հասկացությունը նախագծից չի հանվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասկացությունը լայն կիրառություն ունի զբոսաշրջության ոլորտում, սակայն դեռևս չունի հիմնական բնորոշում: Հասկացությունը ոլորտի վիճակագրության մեջ էլ լայն կիրառում ունի: 2. 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ «սփյուռքահայ զբոսաշրջիկ» հասկացությունը հանվել է: Ըստ այդմ 3-րդ հոդվածի 1-ին մասի կետերի համարակալումը փոփոխվել է:	Ընդունվել է մասամբ:
3.	***Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Խաչատրյան***	3-րդ հոդված	Առաջարկում եմ 1. Նախագծի 3-րդ հոդվածից հանել 4-րդ կետը՝ "սփյուռքահայ զբոսաշրջիկի" սահմանումը, քանի որ.	Ընդունվել է	Ընդունվել է

			1) Կարգավորման առումով Օրենքը որևէ տարբերակում չի դնում զբոսաշրջիկի և սփյուռքահայ զբոսաշրջիկի միջև: Այդ հասկացության ներառումը որևէ հավելյալ արժեք չի ստեղծում. 2) Սփյուռքահայի առաջարկված սահմանումը խիստ վիճելի է, առաջնորդվում է "հողի սկզբունքով" այն ոչ թե "արյան սկզբունքով": Հիշեցնեմ, որ Քաղաքացիության մասին օրենքով "ծագումով հայը, այսինքն՝ ունի հայ նախնիներ", կարող է ՀՀ քաղաքացիություն ստանալ: Այսինքն՝ գործում է հենց "արյան սկզբունքը": Ըստ այդմ, սփյուռքահայի "սահմանման" հիմքում պետք է գործի հենց այդ սկզբունքը:		
4.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	3-րդ հոդված	Նախագծի հոդված 3 կետ 5-ով սահմանված «զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը» արդյոք չպիտի՞ ունենա իրավաբանական անձի կարգավիճակ: Եթե ունի, առաջարկում եմ ներառել սահմանման մեջ:	Ընդունվել է «Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը» ունի իրավաբանական անձի կարգավիճակ, այն համարվում է ոչ առևտրային կազմակերպություն: Ձևակերպումը խմբագրվել է՝ առավել որոշակիացնելով միավորման գործառույթները:	Ընդունվել է
5.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	3-րդ հոդված	Առաջարկում եմ նախագծի հոդված 3 կետ 35-ում «**հյուրանոցային տնտեսության օբյեկտ»** հասկացությունը որոշակիացնել՝ սահմանելով այն ըստ էության:	Ընդունվել է Հյուրանոցային տնտեսության օբյեկտ հասկացությունը խմբագրվել է՝ միաժամանակ	Ընդունվել է

				ներկայացվել են հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակները՝ յուրաքանչյուրն իր համապատասխան բնութագրով: Հաշվի առնելով նաև ՀՀ Ազգային ժողովում կայացած նիստերի ընթացքում հնչեցված դիտարկումները, կապված օրենքի մակարդակում սահմանման ենթակա կարգավորումների՝ կառավարությանը վերապահված դրույթների հետ՝ նախագծում կատարվել է փոփոխություն. մասնավորապես՝ առաջին ընթերցման ընթացքում քննարկվող նախագծով նախատեսված էր, որ կառավարությունը պետք է սահմաներ հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակներն ու դրանց նվազագույն չափանիշները: Առաջարկվող փոփոխությամբ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներառում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակների, դրանց նվազագույն	

				չափանիշների վերաբերյալ դրույթներ:	
6.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	4-րդ հոդված	Առաջարկում եմ նախագծի հոդված 4-ում՝ կառավարության լիազորությունների մեջ, ներառել նոր երկու կետեր՝ ա) «հաստատում է զբոսաշրջության զարգացման հնգամյա ռազմավարությունը», բ) «հաստատում է զբոսաշրջային կենտրոնի չափանիշներն ու նորմերը, շնորհում է զբոսաշրջային կենտրոնի կարգավիճակ»:	Ընդունվել է մասամբ. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը հաստատելու է կառավարությունը՝ օրենքի նախագծում ավելացվել է դրույթ, որով կառավարության լիազորությունների մեջ նախատեսվում է ռազմավարության հաստատումը, բայց նախագծով չի սահմանափակվում ռազմավարության գործողության ժամկետը: Զբոսաշրջային կենտրոնի կարգավիճակի կամ զբոսաշրջային կենտրոն հայտարարելու լիազորությունը արդեն իսկ նախատեսված է կառավարության լիազորություններում /4-րդ հոդվածի 2-րդ մասով/, իսկ այն չափանիշները, որով կառաջնորդվենք զբոսաշրջային կենտրոնի կամ զբոսաշրջային գյուղի	Ընդունվել է մասամբ.

				ընտրության համար, կհաստատվեն պետական լիազոր մարմնի կողմից /5-րդ հոդվածով/:	
7.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	5-րդ հոդված	Առաջարկում եմ նախագծի հոդված 5-ում ավելացնել նոր կետ՝ «**Վերահսկում է և մշտադիտարկում զբոսաշրջության զարգացման ամենամյա ծրագրերն ու ռազմավարությունը»:**	Ընդունվել է մասամբ Առաջարկվող ծրագրերի մշտադիտարկմանը վերաբերող դրույթն ավելացվել է 6-րդ հոդվածում՝ Զբոսաշրջության կոմիտեի լիազորությունների մեջ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեն է հանդիսանում զբոսաշրջության բնագավառում օրենքով սահմանված լիազորություններ կրող իրավասու պետական մարմին:	Ընդունվել է մասամբ.
8.	***Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան***	6-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետ	Առաջարկում եմ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 6. Զբոսաշրջության կոմիտեի լիազորությունները 12) հաշմանդամություն ունեցող անձանց համար զբոսաշրջային ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով մշակում է զբոսաշրջության մատչելիության մասին իրազեկվածության տեղեկատվական	Ընդունվել է Ներկայացված նախագծերի փաթեթում առաջարկվող ձևակերպումները առկա են, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով արդեն սահմանված են մեթոդական ուղեցույցներ մշակելու	Ընդունվել է

			նյութեր և արշավներ, իրականացնում է մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթաց՝ համագործակցելով համապատասխան լիազոր մարմնի հետ.»:	լիազորությունները, անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծում նշված հատվածը ներառված չէ: Սակայն, մարդկային ռեսուրսների պատրաստման կամ վերապատրաստման աջակցությանն ուղղված գործընթացը՝ նախատեսված է «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծով:	
9.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	9-րդ հոդված	Ոլորտում գործունեություն իրականացնող մի շարք սուբյեկտների որակավորման գործընթացները բավարար հստակ և որոշակի չեն: Առաջարկում եմ Նախագծում որոշակիացնել և հստակ ներկայացնել զբոսաշրջության ոլորտում որակավորման գործընթացները՝ սահմանելով նաև որակավորման էությունը, նպատակը և որակավորվող ծառայություններն ու օբյեկտները:	Ընդունվել է Որակավորման գործընթացները ավելի հստակեցվում են՝ նկարագրելով զբոսաշրջության բնագավառում որակավորման էությունը: Մասնավորապես՝ առաջին ընթերցմամբ ներկայացված նախագծում նախատեսված է Կառավարության որոշմամբ սահմանել որակավորման էությունը, ընթացակարգերը, կարգերը և այլն: Օրենքի նախագծում կատարված փոփոխության արդյունքում որակավորման էությունը, որակավորվող ծառայություններն ու օբյեկտները, որակավորումից	Ընդունվել է

				զրկելու դեպքերը արդեն հստակեցված են օրենքում /հոդված 9/: Բացի այդ՝ Հոդված 13-ում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման վերաբերյալ դրույթներն են հստակեցվել՝ սահմանելով՝ որ միավորումները կարող են որակավորում իրականացնել ու տրամադրել, ինչպես են ընտրվում նշված միավորումները և ինչ պահանջներ կան այդ միավորումների նկատմամբ: Կարևոր լրացում է այն, որ եթե որևէ միավում չի ընտրվում որակավորման գործընթացն ապահովելու համար կամ ուղղակի նշված միավորումը չի կարող իրականացնել որակավորման գործընթացը, նշված գործառույթը իրականացվում է Զբոսաշրջության կոմիտեի կողմից /հոդված 13/: Հստակեցվել են նաև զբոսաշրջային ավտոբուսի որակավորման համար պահանջներ, այդ թվում՝ ավտտոբուսի դիմապակու վրա	

				որակավորման նշանի փակցնելը և այլն /հոդված 16/: Հոդված 18-ում զբոսավարների և ուղեկցորդների համար հստակեցվել և ավելացվել է դրույթ որակավորման և վերապատրաստման դասընթացներին մասնակցելու վերաբերյալ /հոդված 18, 4-րդ մաս/: Հոդված 19-ը լրացվել է զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների պարտադիր որակավորման դրույթներով, որի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, ճանաչելիության բարձրացման հրամայականի հետ: Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների որակավորման պահանջը դարձել է կամավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս միջազգային հստակ որևէ փորձ առկա չէ տեղեկատվական կենտրոնների պարտադիր որակավորման և դրա	

				արդյունավետության վերաբերյալ: Տեղեկատվական կենտրոններին Զբոսաշրջության կոմիտեի կողմից պարբերաբար տրվում է աջակցություն, ուստի ներկայումս պարտադիր որակավորումը որևէ հարց կամ խնդիր չի լուծի:	
10.	***Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան***	9-րդ, 12-րդ, 14-րդ,17-րդ, 19-րդ հոդվածներ	Առաջարկում եմ Նախագծի հոդված 9-ի 3-րդ կետում, Հոդված 12-ում, Հոդված 14-ի 6-րդ կետում, Հոդված 17-ի 2-րդ կետում, Հոդված 19-ի 2-րդ կետում տեղ գտած կառավարությանը վերագրված լիազորությունները ամփոփել համապատասխան հոդվածի՝ 4-ի մեջ:	Ընդունվել է մասամբ Նշված հոդվածների վերաբերյալ անցումային դրույթներում կարգավորումներ են նախատեսված, որոնք չխախտելու նպատակով, կարծում ենք, որ առավել նպատակահարմար է նախագծով սահմանված տարբերակի ընդունումը: Այնուամենայնիվ, Նախագիծը լրացվել է նոր կետով առ այն, որ Կառավարությունն իրականացնում է Նախագծով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:	Ընդունվել է մասամբ
11.	***Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան***	23-րդ հոդված	Առաջարկում եմ Նախագծի 23-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 23. Զբոսաշրջիկի իրավունքները՝	Ընդունվել է	Ընդունվել է

			Զբոսաշրջիկն իրավունք ունի՝ իր մայրենի լեզվով կամ այլ իրեն հասկանալի լեզվով, իսկ անհնարինության դեպքում միջազգայնորեն ընդունված առավել տարածված լեզվով զբոսաշրջային օպերատորից կամ զբոսաշրջային գործակալից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն ժամանման երկրի (վայրի)՝ զբոսաշրջության հետ առնչվող օրենքների և կենցաղավարության, տեղաբնակների սովորույթների, հասարակական և կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային, հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրական և զբոսաշրջային ծառայությունների տրամադրման պայմանների, ըստ անհրաժեշտության՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի (ներառյալ տրանսպորտի), տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության մասին.»:		
12.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկում եմ Նախագծի 1-ին հոդվածի «շրջագայության» բառից հետո կիրառվող «,» կետադրական նշանը հանել՝ հաշվի առնելով դրա ավելորդությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	**ՀՀ կառավարություն**	1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներում առկա են	Ընդունվել է	Ընդունվել է

			չհամարակալված պարբերություններ, ուստի հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, համաձայն որի՝ օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: (...), առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը վերանայել: Բացի այդ, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «օրենքի» բառից առաջ կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերն հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջները: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի և հարակից օրենքների նախագծերի ամբողջ տեքստին:	Պարբերությունները համարակալվել են, «Հայաստանի Հանրապետության» բառերը հանվել են ոչ միայն նշված հոդվածում, այլև «Զբոսաշրջության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ամբողջ տեքստից	
14.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «5-րդ ենթակետի» բառերը փոխարինել «1-ին մասի 5-րդ կետի» բառերով, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի «6-րդ ենթակետով» բառերը՝ «1-ին մասի 6-րդ կետի» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ճիշտ համարակալմամբ կատարել մեջբերումը:	Ընդունվել է	Ընդունվել է

15.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի «13-րդ կետի ե) համարակալված պարբերության» բառերն անհրաժեշտ է փոխարինել «12-րդ կետի ե. պարբերության» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ընդունված համարակալմամբ կատարել մեջբերումը:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծում բազմիցս կիրառվում է «զբոսաշրջային գործունեություն» հասկացությունը՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածով ավելացնել այդ հասկացությունը: Առաջարկում ենք հստակեցնել «Զբոսաշրջային օպերատոր» հասկացությունը, որը ցույց կտա, որ զբոսաշրջային օպերատորը ձևավորում է զբոսաշրջային փաթեթ, տուր կամ այլ ծառայություններ՝ համապատասխանաբար խմբագրելով նաև «Զբոսաշրջային գործակալ» հասկացությունը: Առաջարկում ենք «զբոսաշրջային ծառայություններ» հասկացության մեջ նախատեսել նաև էքսկուրսային ծառայությունները, քանի որ դրանք համարվում են զբոսաշրջային առաջնային ծառայություններից մեկը: Միաժամանակ առաջարկում ենք նաև Նախագծի 3-րդ հոդվածում և ամբողջ տեքստում առկա վրիպակները շտկել,	Ընդունվել է Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության կողմից ներկայացված եզրակացության արդյունքները՝ օրենքների նախագծերի փաթեթում կատարվել են որոշ փոփոխություններ և լրացումներ, որոնք ուղղված են օրենքի նախագին առավել ամբողջականացնելուն և առկա հնարավոր վրիպակներն ու թերությունները շտկելուն: Նշված լրացումներից է «Զբոսաշրջային գործունեություն» հասկացությունը, որը առաջին ընթերցմամբ ներկայացված նախագծից բացակայում էր, սակայն, ընդունելով, որ նշված հասկացությունը բազմակի կիրառություն ունի օրենքի նախագծում, առաջարում ենք նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր «Զբոսաշրջային	Ընդունվել է

			օրինակ՝ կենցաղավարություն, ընթացքում, առանձնացված և այլն:	գործունեություն» հասկացությամբ: «Զբոսաշրջային օպերատոր» և «Զբոսաշրջային գործակալ», «Զբոսաշրջային ծառայություններ» հասկացությունները հստակեցվել են, իսկ առկա վրիպակներն ու թերությունները շտկվել են:	
17.	**ՀՀ կառավարություն**	4-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «տնտեսավարողներին» բառը փոխարինել «իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին» բառերով՝ հաշվի առնելով, որ «տնտեսավարող» հասկացությունը ներառված չէ օրենքում, բացի այդ, իրավական տերմինաբանությամբ ընդունված են «իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր» հասկացությունները:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	**ՀՀ կառավարություն**	4-րդ հոդված	Հաշվի առնելով, որ մշակվում է զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների՝ Հայաստանի համար ընդունելի մոդելը, որը նաև կհամապատասխանի միջազգային ընդունված չափանիշներին՝ առաջարկում ենք հետագա հնարավոր խոչընդոտներից խուսափելու նպատակով զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության	Ընդունվել է Զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների պատշաճ գործունեությունը ապահովելու, դրանով իսկ Հայաստանի զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով առաջարկվող նախագծում զբոսաշրջային	Ընդունվել է

			գործունեությունը նախատեսել պարտադիր որակավորման ենթակա՝ կառավարության լիազորություններից հանելով զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություն հիմնելու գործառույթը: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը հանել:	կենտրոն կառավարող կազմակերպությունների գործունեությունը դառնում է պարտադիր որակավորման ենթակա գործունեություն:	
19.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն Կոմիտեն մշակում է **զբոսաշրջության բնագավառի ռազմավարությունը, զարգացման պետական ծրագրերը,** ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը: Սույն դեպքում պարզ չէ, թե ում կողմից են հաստատվելու **զարգացման պետական ծրագրերը և զբոսաշրջության բնագավառի ռազմավարությունը, նկատի ունենալով, որ Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներով համապատասխանաբար նախատեսվում են հնգամյա ռամավարության և տարեկան ծրագրերը հաստատելու լիազորություններ, եթե մշակվող ծրագրերը նույն 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված իրավական ակտերն են, ապա առաջարկում ենք Նախագծի**	Ընդունվել է մասամբ. Հոդվածներում առկա ձևակերպումները համապատասխանեցվել են միմյանց. Կոմիտեի լիազորությունների մեջ մտնող ռազմավարության և տարեկան ծրագրերի մշակման վերաբերյալ ձևակերպումը պահպանվում է նախագծում՝ քանի որ նշված փաստաթղթերը ոլորտի ուղենիշային փաստաթղթերն են, բացի այդ՝ նշված դրույթը այլ գործառույթ էլ է նախատեսում՝ կապված փաստաթղթերի իրականացման և մշտադիտարկման հետ:	Ընդունվել է մասամբ

			4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց: Բացի այդ, եթե Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի մշակվող ծրագիրը ներառված է 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նախատեսված ընդունվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շրջանակում, ապա անհասկանալի է Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կարգավորման անհրաժեշտությունը:		
20.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի «անձանց» բառից հետո լրացնել «և անհատ ձեռնարկատերերի» բառերը՝ հաշվի առնելով, որ տվյալ գործունեությունը իրականացնում են նաև անհատ ձեռնարկատերերը:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի «անձանց» բառից հետո լրացնել «և անհատ ձեռնարկատերերի» բառերը՝ հաշվի առնելով, որ տվյալ գործունեությունը իրականացնում են նաև անհատ ձեռնարկատերերը:	Ընդունվել է	Ընդունվել է
22.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն ապահովում է որակավորված զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային ավտոբուսների,	Ընդունվել է Պետական լիազոր մարմնի լիազորություններում /հոդված 5/ զբոսաշրջային փորձառությունների	Ընդունվել է

			զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների և զբոսաշրջային փորձառությունների պարբերական գնահատման աշխատանքները: Սույն դեպքում առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ կարգով է իրականացվելու փորձառությունների պարբերական գնահատման աշխատանքները: Բացի այդ՝ առաջարկում ենք 6-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետում լրացնել որակավորման ենթակա բոլոր ծառայություններն ու օբյեկտները:	որակավորմանն առնչվող դրույթը լրացվել է՝ հստակեցնելով զբոսաշրջային փորձառությունների որակավորմանն առնչվող ենթաօրենսդրական իրավական ակտի բնույթը, որը կարող է ենթադրել նաև պարբերական գնահատում: Այսինքն՝ պարբերական գնահատմանն առնչվող դրույթները /ժամկետները, կարգը և այլն/ հստակ կսահմանվեն արդեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի շրջանակում:	
23.	**ՀՀ կառավարություն**	6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի «,» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պահանջը:	Ընդունվել է	Ընդունվել է
24.	**ՀՀ կառավարություն**	8-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի «գույքագրման և» բառերն հանել՝ հաշվի առնելով Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրը: Բացի այդ՝ առաջարկում ենք տվյալ հոդվածի 1-ին մասը «վարման» բառից հետո լրացնել «կարգը» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

25.	**ՀՀ կառավարություն**	9-րդ հոդված	Նախագծի 4-րդ գլխով նախատեսվում է սահմանել **զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց,** դրանց որակավորումը և դասակարգումը: Նախագծի 9-րդ հոդվածի համաձայն Զբոսաշրջության բնագավառում որակավորումը պետական լիազոր մարմնի կամ սույն օրենքով սահմանված դեպքերում զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումների կողմից հյուրանոցային տնտեսության օբյեկտի, զբոսաշրջային ավտոբուսի, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի, **զբոսավարի,** ուղեկցորդի, զբոսաշրջային փորձառությունների՝ սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերով սահմանված չափորոշիչներին և պահանջներին համապատասխանության հաստատումն է: Իսկ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն **զբոսավարը՝** օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ստացած անձ է, որը զբոսաշրջիկներին տրամադրում է տեղեկություններ հնագիտության, պատմության, նվաճումների, բնության,	Ընդունվել է Խմբագրվել է նախագծի 3-հոդվածի համապատասխան կետը, որում այլևս «կազմակերպչական ծառայություններ» եզրույթը չի օգտագործվում տարակարծություններից խուսափելու նպատակով:	Ընդունվել է

			աշխարհագրության, պետության կառուցվածքի, զբոսաշրջային արդյունքի, հայ ժողովրդի և ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի, կենցաղավարության մասին և զբոսաշրջային երթուղու շրջանակներում **մատուցում է կազմակերպչական ծառայություններ,** այդ թվում՝ զբոսաշրջիկներին դիմավորում, տեղաբաշխում, տեղավորում, սննդի կազմակերպում և այլն: Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի կարգավորումը վերանայել, քանի որ նախատեսված կարգավորումներից բխում է, որ զբոսավարը կազնմակերպչական ծառայություններ մատուցող է:		
26.	**ՀՀ կառավարություն**	9-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի «որակավորման» բառից հետո լրացնել «կարգի» բառը, հիմք ընդունելով նույն հոդվածի 2-րդ մասի կարգավորումը: Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասին: Բացի այդ, առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածը լրամշակել, նախատեսելով կարգավորում, համաձայն որի թերի ներկայացման փաստաթղթերի դեպքում	Ընդունվել է Փոփոխությունը կատարվել է. բոլոր դրույթներում նշվել է որակավորում կամ որակավորման կարգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՏՕ-ներին տրամադրվում է ոչ թե որակավորում, այլ որակավորման կարգ /աստղեր/: Թերությունների շտկման վերաբերյալ կարգավորումները անպայմանորեն կտրվեն	Ընդունվել է

			հնարավորություն կլինի դրանք լրացնել և կրկին ներկայացնել:	ենթաօրենսդրական ակտերի շրջանակում՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր որակավորման ընթացակարգով կսահմանվեն առանձին պայմաններ թերությունների շտկման համար:	
27.	**ՀՀ կառավարություն**	10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ զբոսաշրջային ծառայություն մատուցող անձ է նաև զբոսավարը, մինչդեռ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ զբոսավարը օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ստացած անձ է, որը զբոսաշրջիկներին տրամադրում է տեղեկություններ հնագիտության, պատմության, նվաճումների, բնության, աշխարհագրության, պետության կառուցվածքի, զբոսաշրջային արդյունքի, հայ ժողովրդի և ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի, կենցաղավարության մասին և զբոսաշրջային երթուղու շրջանակներում մատուցում է կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջիկներին դիմավորում, տեղաբաշխում, տեղավորում, սննդի կազմակերպում և այլն:	Ընդունվել է Խմբագրվել է նախագծի 3-հոդվածի համապատասխան կետը, որում «կազմակերպչական ծառայություններ» եզրույթը չի օգտագործվում տարընթերցումից խուսափելու նպատակով:	Ընդունվել է

			Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը վերանայել:		
28.	**ՀՀ կառավարություն**	12-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ափարթհոթել (aparthotel)՝ հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար հարմարեցված, խոհանոցային հատված ունեցող և համապատասխան սարքավորումներով կահավորված, համեմատաբար երկար ժամկետով մնացող սպառողների համար նախատեսված ոչ բնակելի շինություն, որը նախատեսված չէ սպառողների մշտական բնակության համար: Նախագծի 11-րդ հոդվածի համաձայն՝ հյուրանոցային ծառայություններն են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման հետ կապված, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ծառայությունները: Նշված կարգավորումից բխում է, որ հյուրանոցային ծառայությունները չեն կարող իրականացվել ոչ բնակելի շինությունում, ուստի, առաջարկում ենք ափարթհոթելն որպես ոչ բնակելի շինություն դիտարկելը վերանայել:	Ընդունվել է	Ընդունվել է

29.	**ՀՀ կառավարություն**	13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածում կիրառվում են «օբյեկտ» և «օբյեկտներ» հասկացությունները համապատասխան հոլովաձևերով: Սույն դեպքում, առաջարկում ենք դրանք համապատասխանեցնել միմյանց:	Ընդունվել է	Ընդունվել է
30.	**ՀՀ կառավարություն**	15-րդ հոդված	Կարևորվելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից ներկայացվող երաշխիքի վերաբերյալ օրենքի մակարդակում հիմնավոր ու հստակ ձևակերպումների տրամադրումը, այդ թվում՝ որոնք են երաշխիք տրամադրող կազմակերպությունները /բանկեր, ապահովագրական ընկերություններ/, ինչ պարտավորություն է իրականացվում երաշխիքով, ինչպես է գործում երաշխքիքը և այլն՝ առաջարկում ենք հստակեցնել զբոսաշրջային գործունեության սուբյետների կողմից ներկայացվող երաշխիքի վերաբերյալ դրույթները՝ կատարելով լրացում 15-րդ հոդվածում:	Ընդունվել է	Ընդունվել է
31.	**ՀՀ կառավարություն**	20-րդ, 23-րդ և 26-րդ հոդվածներ	Նախագծով սահմանված չեն հստակ պահանջներ ու արգելքներ զբոսաշրջային ծառայություն մատուցողների նկատմամբ, ինչը կարող է տարընկալումների առիթ տալ և չլուծել ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներ, ինչպես օրինակ՝ զբոսավարի կողմից զբոսաշրջային օպերատորի կամ այլ ծառայություն մատուցողի գործունեություն կատարելը, հանրային տարածքներում	Ընդունվել է	Ընդունվել է

			անհայտ անձանց կողմից թիրախավորված զբոսաշրջային ծառայություն կատարելը, հյուրանոցային տնտեսության օբյեկտը իր տեսակին ու կարգին (եթե առկա է) համապատասխխան չներկայացնելը, չորակավորված ավտոբուսով զբոսաշրջիկների տուրերի կազմակերպումը (ինչը անվտանգության տեսակետից է խնդիր առաջացնում) և այլն: Առաջարկում ենք նշված բոլոր խնդիրները ձևակերպել մեկ հոդվածում /նոր հոդված 20/ և դրանց նկատմամբ սահմանել համապատասխան վերահսկողություն: Բացի այդ՝ Նախագծում սպառողի հետ կնքվող զբոսաշրջային փաթեթի պայմանագրին առնչվող դրույթները ամբողջությամբ չեն արտահայտում գոյություն ունեցող խնդիրները՝ կապված պայմանագրերի վաղաժամկետ լուծման ու սպառողներից պարբերաբար ստացվող բողոքների լուծման հետ: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք հոդված 23-ը լրացնել նոր մասերով, որոնք կներկայացնեն պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքերում պայմանները՝ սահմանելով նաև՝ որ մարմինն է պատասխանատու բողոքների ընդունման, դրանց		

			քննության և ընթացք տալու համար /նոր հոդված 26/:		
32.	**ՀՀ կառավարություն**	20-րդ հոդված	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է մատուցել զբոսաշրջային ծառայություններ, եթե զբոսաշրջային ծառայություններ մատուցելու մտադրություն ունեցող անձը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չի ծանուցել: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց գործունեությունը ենթակա է ծանուցման «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշյալ կարգավորման համաձայն միայն 1-5 դեպքերում է նախատեսված պարտադիր ծանուցման պահանջ, առաջարկում ենք Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը վերանայել:	Ընդունվել է մասամբ. Փոփոխությունը կատարվել է: Մասնավորապես՝ 20-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցվել է՝ որ ծառայությունների մասին է խոսքը, որպեսզի թյուրընկալում չառաջանա: Նախագծի 20-րդ հոդվածի 4-րդ մասում և 23-րդ հոդվածում, որտեղ նշվում է, թե որ ծառայություններին է վերաբերում հարցը («տվյալ տեսակի համար» ձևակերպումը առկա է), նշված խնդիրը առկա չէ:	Ընդունվել է մասամբ

			Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 20-րդ հոդվածի 4-րդ մասին և 23-րդ հոդվածին:		
33.	**ՀՀ կառավարություն**	24-րդ հոդված	Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով զբոսավարների և ուղեկցորդների համար նախատեսված պահանջը՝ հարգել զբոսաշրջիկի արժանապատվությունը, ավանդույթները, սովորույթները, կրոնական համոզմունքները եւ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից կամ արտահայտություններից, որոնք կարող են վիրավորել զբոսաշրջիկի մշակույթը, կրոնական համոզմունքները եւ այլ հավատալիքները, անիմաստ է սահմանել, քանի որ նշված պահանջը յուրաքանչյուր անձի՝ Սահմանադրությամբ սահմանված պարտավորությունն է: Առաջարկում ենք կետը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
34.	**ՀՀ կառավարություն**	«Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծի 27-րդ հոդված	Նախագծի 27-րդ հոդվածի վերնագրում «Անցումային» բառն առաջարկում ենք փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային» բառերով՝ հաշվի առնելով հոդվածի բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է

35.	**ՀՀ կառավարություն**	«Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծի տեքստ	Նախագծի ամբողջ տեքստում «ենթաօրենսդրական ակտ» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» ձևակերպմամբ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի կարգավորումները:	Ընդունվել է	Ընդունվել է
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենք					
36.	***Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան***	1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագիծը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 171.12 «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները խախտելը 6. Հյուրանոցներում, առողջարաններում և հանգստյան տներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հյուրանոցային ծառայություններից օգտվելու և ծառայությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու հնարավորություն չապահովելը կամ այդ մասին հյուրերի համար տեսանելի հատվածներում տեղեկատվություն չտեղարելը կամ չպահպանելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկկուհարյուրհիսնապատիկից երեքհարյուրհիսնապատիկի չափով:»:	Ընդունվել է մասամբ. Ձևակերպումը համապատասխանեցված է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծի ձևակերպանը, այսինքն՝ պահանջը վերաբերում է միայն նոր կառուցվող հյուրանոցներին և առողջարաններին, իսկ տուգանքի չափի վերաբերյալ առաջարկն ընդունվել է:	Ընդունվել է մասամբ

37.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հաշվի առնելով օրենսգրքի վերնագր ամբողջական գրելու կարևորությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
38.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագիծը խմբագրել՝ հաշվի առնելով «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծանուցման ենթակա գործունեության տեսակների կողմից պահանջների խախտումները պետք է կարգավորվեն «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով, մասնավորապես՝ պահանջի խախտումը կարող է առաջացնել գործունեության կասեցում, ապա նաև դադարեցում, ոչ թե ուղղակի վարչական պատասխանատվություն: Մասնավորապես՝ առաջարկում ենք նախագծից հանել 1-ին հոդվածով լրացվող 171.12 հոդվածի 1-ին, 7-րդ և 10-րդ մասերը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջային օպերատորի, զբոսաշրջային գործակալի, ուղեկցորդի, զբոսավարի և հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գործունեությունը դառնում է ծանուցման ենթակա՝ վերջիններիս կողմից խախտումները կառաջացնեն գործունեության կասեցում կամ դադարեցում «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով: Ուստի, նախագծից հանվել են նշված ծառայություն մատուցող անձանց խախտումներին ու դրանց վարչական պատասխանատվությանը վերաբերող դրույթները /171.12 հոդվածի 1-ին, 7-րդ և 10-րդ մասերը/:	Ընդունվել է

39.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով ներկայացված Հոդված 171.12-ի 3-րդ մասում «Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միության» ձևակերպումը դարձնել «Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորում»՝ հաշվի առնելով, որ «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծում գործածվում է վերջին ձևակերպումը: Միաժամանակ առաջարկում ենք հստակեցնել՝ որ պետական լիազոր մարմնի մասին է խոսքը:	Ընդունվել է Ձևակերպումը համապատասանեցվել է «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծում գործածվող հասկացությանը, իսկ պետական լիազոր մարմինը ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն է:	Ընդունվել է
40.	**ՀՀ կառավարություն**	2-5-րդ հոդվածներ	Առաջարկում ենք Նախագծի հոդված 3-ը խմբագրել՝ Զբոսաշրջության մասին օրենքով նախատեսված պահանջների նկատմամբ վերահսկողությունը նախատեսելով ՀՀ ներքին գործերի նախարարության, Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի և Զբոսաշրջության կոմիտեի գործառույթների շրջանակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ապահովել վերահսկողական մեխանիզմների առավել արդյունավետ կիրառություն: Մասնավորապես առաջարկում ենք Զբոսաշրջային ավտոբուսների որակավորման առկայությունը, զբոսավարների և ուղեկցորդների ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևին համապատասխան անվանաքարտ կրելու պահանջի ստուգումը իրականացնել	Ընդունվել է Նախագծի հոդված 3-ը խմբագրվել է, առաջարկվող փոփոխությունները ներկայացվել են նոր հոդվածներում /2-5-րդ հոդվածներ/:	Ընդունվել է

			ՀՀ ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության կողմից: Պահանջների խախտման դեպքում կազմել արձանագրություն և տրամադրել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին: Առաջարկում ենք հյուրանոցային տնտեսության օբյեկտում հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից սպառողների համար տեսանելի հատվածում «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները տեղադրելու (այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություն մատուցելու) պահանջի ստուգումը, քննումը և արձանագրություն կազմումը պատվիրակել տեսչական մարմնին: Առաջարկում ենք, որ Զբոսաշրջության կոմիտեն բողոքների հիման վրա քննի առանց զբոսաշրջային փաթեթի պայմանագրի զբոսաշրջային փաթեթ տրամադրելը կամ զբոսաշրջային ծառայություններ մատուցելը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող պարտադիր տեղեկությունները զբոսաշրջային փաթեթի պայմանագրում չներառելը, զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միության կողմից իր կանոնադրության փոփոխությունները առանց պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու ընդունելը,		

			զբոսաշրջային տեղեկավական կենտրոնների և զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների որակավորված լինելը: Արդյունքում՝ արձանագրությունը տրամադրվում է տեսչական մարմին:		
41.	**ՀՀ կառավարություն**	5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.7-րդ հոդվածում լրացվող նոր 1.1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 171.12-րդ հոդվածի 1-3-րդ և 8-17-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական տույժեր է նշանակում Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը: Իսկ լրացվող նոր 2.1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 171.12-րդ հոդվածի 1-3-րդ և 10-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և Շուկայի վերահսկողության տեսչական մարմին արձանագրություն տրամադրում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն: Սույն դեպքում, առաջարկում ենք լրացուցիչ պարզաբանել վերոհիշյալ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննության և վարչական տույժեր նշանակելու գործառույթները երկու	Ընդունվել է մասամբ. Զբոսաշրջային ծառայություններից բողոքները ստացվում են Զբոսաշրջության կոմիտե: Զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց միավորումների կանոնադրական փոփոխությունները պետք է համաձայնեցվեն Զբոսաշրջության կոմիտեի հետ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կոմիտեն կքննի համապատասխան գործերը և արձանագրությունը կտրամադրի Շուկայի վերահսկողական տեսչական մարմին: Համարակալումը շտկվել է:	Ընդունվել է մասամբ

			տարբեր մարմիններին վերապահելու անհրաժեշտությունը, այն պարագայում, երբ արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է այդ երկու գործառույթները վերապահել մեկ մարմնի: Առաջարկում ենք նաև Նախագծի համարակալումը վերանայել, քանի որ դրանում 1-ին հոդվածից հետո նշված է 3-րդ հոդվածը: Բացի այդ, նախագծի 8-րդ հոդվածի «2-րդ հոդվածով» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին հոդվածով» բառերով:		
42.	**ՀՀ կառավարություն**	7-րդ և 8-րդ հոդվածներ	Առաջարկում ենք Նախագծի 7-րդ և 8-րդ հոդվածներում լրացնել վերնագրերը համապատասխանաբար «Եզրափակիչ մաս» և «Անցումային դրույթներ» ձևակերպմամբ՝ հաշվի առնելով հոդվածների բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենք					
43.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի համարակալումն վերանայել՝ այն համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասին, համաձայն որի՝ օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի	Ընդունվել է	Ընդունվել է

			համարները՝ փակագծերով: **Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով:**		
43.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 5-րդ մասի 1-ին կետի ե. և զ. ենթակետերի կարգավորումը վերանայել, քանի որ 5-րդ մասում և 5-րդ մասի 1-ին կետում զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության որակավորման համար և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի որակավորման համար դրույքաչափ չի նախատեսվում:	Ընդունվել է Հոդվածի 5-րդ մասում և 5-րդ մասի 1-ին կետում ավելացվել է զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի որակավորման համար դրույքաչափ նախատեսող դրույթ:	Ընդունվել է
44.	**ՀՀ կառավարություն**	2-րդ **հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածում «Անցումային» բառը փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային» բառերով՝ հաշվի առնելով հոդվածի բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
45.	**ՀՀ կառավարություն**	2-րդ **հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունիսի 30-ից, բացառությամբ հոդվածով նախատեսված դեպքերի: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ Հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի	Ընդունվել է Ժամկետը համապատասխանեցված է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման ժամկետին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցման պահանջը ուժի մեջ մտնելը ենթադրում է նաև պետական տուրքի պահանջի սահմանում:	Ընդունվել է

			դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից: Առաջարկում ենք փոխել նախագծի ուժի մեջ մտնեու ամսաթիվը: Բացի այդ՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասում ավելացնել «թվականի» բառը:	Սակայն, օրենքների նախագծերը նախատեսված էր Ազգային ժողովում քննարկել ս.թ. սեպտեմբեր ամսին, ինչը հետաձգվեց, ուստի դիտարկումը ընդունելի է և օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվում է 2024թ. սեպտեմբերի 1-ը: Ելնելով նշվածից՝ խմբագրվել են բոլոր հարակից օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետները՝ սահմանելով 2024թ. սեպտեմբերի 1-ը:	
«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի					
46.	***Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան***	3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 3. Սույն օրենքն ընդունվելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը և պետական լիազոր մարմինն հաստատում են սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական ակտերը մինչև 2024 թվականի հունիսի 30-ը: Այս դրույթն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրվանից: Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական լիազոր	Ընդունվել է մասամբ «Հաշմանամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ամսաթիվը խմբագրվել է՝ նախատեսելով, որ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում կմշակվեն համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:	Ընդունվել է մասամբ

			մարմնի հաստատած ենթաօրենսդրական ակտերն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 30-ից:»:		
47.	**ՀՀ կառավարություն**	2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի «սույն օրենքի» բառերն հանել՝ ելնելով դրանց ավելորդ լինելու հանգամանքից:	Ընդունվել է	Ընդունվել է
48.	**ՀՀ կառավարություն**	2-րդ և 3-րդ հոդվածներ	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում լրացնել վերնագրերը համապատասխանաբար «Եզրափակիչ մաս» և «Անցումային դրույթներ» ձևակերպմամբ՝ հաշվի առնելով հոդվածների բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի					
49.	**ՀՀ կառավարություն**	2-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածում լրացնել վերնագիր «Եզրափակիչ մաս» ձևակերպմամբ՝ հաշվի առնելով հոդվածի բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
««Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենք					
50.	**ՀՀ կառավարություն**	1-ին և 2-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում նախատեսված է 3-րդ կետ, մինչդեռ նշված կետում կարգավորումը բացակայում է, ուստի, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «3)» թիվը հանել: Իսկ 2-րդ հոդվածի «Անցումային դրույթներ» բառերն առաջարկում ենք փոխարինել «Եզրափակիչ մաս» բառերով, հաշվի առնելով հոդվածի	Ընդունվել է Վերանայվել է հոդված 1-ի, ոչ թե 2-ի համարակալումը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջները:	Ընդունվել է

			բովանդակությունը, և հոդվածի համարակալումը վերանայել՝ :		
«Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր					
51.	**ՀՀ կառավարություն**	«Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-647[4]-10.08.2023-ՏՀ-011/1) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» (Կ-647[5]-10.08.2023-ՏՀ-011/1) օրենքների նախագծեր	Առաջարկում ենք նախագծերի փաթեթից հանել «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողական գործառույթները վերապահվում են ՀՀ ներքին գործերի նախարարությանը և ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին, որոշ դեպքերում նաև՝ Զբոսաշրջության կոմիտեին: Նշվածի հիման վրա արդեն իսկ ներկայացված են նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրեսնսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարված փոփոխությունները:	Ընդունվել է Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստերի ընթացքում օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ հնչեցված դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության կողմից ներկայացված եզրակացության արդյունքները՝ օրենքների նախագծերի փաթեթում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողական	Ընդունվել է

				գործառույթների պատշաճ իրականացումը ապահովելու, առաջարկվող օրենսդրական նախաձեռնությամբ ներդրվող բարելավումների իրականացման նպատակով անհրաժեշտ է գործառույթը ի սկզբանե սահմանել այնպես, որ դրա գործունեության ընթացքում խոչընդոտներ չառաջանան: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններում զբոսաշրջության ոլորտում վերասկողական գործառույթների սահմանումը աննպատակահարմար է, քանի որ դրանց իրականացման մեխանիզմները հստակ չեն ու ոչ իրագործելի են ներկա փուլում: Վերահսկողական մեխանիզմների՝ կայուն հիմքերի վրա ներդրումը Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Զբոսաշրջության մասին» օրենքի հաջողման առաջնային գրավականն է: Հաշվի առնելով նշվածը և	

				կարևորելով ներկայացված օրենսդրական նախաձեռնության հաջողումը վերջինիս ընդունմամբ զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների լուծման տեսանկյունից՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրեսնսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով վերահսկողական գործառույթները պատվիրակվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը և ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին, որոշ դեպքերում նաև՝ Զբոսաշրջության կոմիտեին, ինչի արդյունքում ներկայացված նախագծերի փաթեթից հանվել են «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:	